

Ի. ՎՈՍՏՐԻՇԵՎ

խորհրդաշին  
ժողովրդի



հեղափոխական  
Բանակ

355

4-87

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵՔ

355

4-87

uf

Ի. Վ. ՈՍՏՐԻՇԵՎ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ  
ՀԵՐՈՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ



28

12 AUG 2013

40.536

MAR 2010

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՎԱԿՆ Ե

Մեծագույն հրճվանքով ու հպարտությամբ են դիմաւորում խորհրդային Միութեան ժողովուրդները Կարմիր Բանակի և Ռազմա-Մովային Նավատորմի 22-րդ տարեդարձը: 1940 թ. փետրվարի 23-ը—Կարմիր Բանակի փառապանծ տարեդարձի օրը—համաժողովրդական տոնախմբութեան օր կլինի: Այդ օրն անխորտակելի, լեներնի—Ստալինի գործին նվիրված՝ սոցիալիզմի բանակը նորից կձառանա ամբողջ աշխարհի առաջ իր ամբողջ ուժով ու հզորութեամբ:

Ինչո՞ւմն է Կարմիր Բանակի ուժն ու հզորութեանը:

Մեր բանակն ուժեղ է ժողովրդի հետ իր ունեցած անքակտելի կապով: Կարմիր Բանակն ազատագրված ժողովրդի բանակն է, սոցիալիստական հեղափոխութեան բանակն է: Նա պահպանում է կանգնած ԽՍՀՄ-ի ժողովուրդների հեղափոխական նվաճումներին:

«... Մեր Կարմիր Բանակն այն առանձնահատկութեանն ունի, Վոր նա հանդիսանում է բանվորների ու գյուղացիների իշխանութեանն ամրապնդելու գործիք, պրոլետարիատի զինվորական ամրապնդելու գործիք, կարվածատերերի ու կապիտալիստների լծից բանվորներին ու գյուղացիներին ազատագրելու գործիք: Մեր բանակն աշխատավորների ազատագրման բանակն է»<sup>1</sup>:

Խորհրդային Միութեան մեջ ժողովուրդն ու բանակը մեկ ընտանիք են կազմում: Կարմիր Բանակը ժողովրդի զավակն է: Նա վայելում է ԽՍՀՄ-ի աշխատավորների ջերմ սերն ու հարգանքը:

«Աշխարհում վոչ մի տեղ չկա ժողովրդի կողմից դեպի բանակը ցուցաբերվող այնպիսի սիրալիր ու հոգատար վերաբերմունք, ինչպես մեզնում: Մեզնում բանակը սիրում են, նրան հարգում են, նրա մասին հոգ են տանում: Ինչո՞ւ: Վորովհետև

<sup>1</sup> Ստալին, Կարմիր Բանակի յերեք առանձնահատկութեանների մասին, օգոստոսի 7, Պետագրատ, 1939 թ.:

2235  
40

И. ВОСТРЫШЕВ

ГЕРОИЧЕСКАЯ АРМИЯ  
СОВЕТСКОГО НАРОДАГосударственное издательство политической литературы  
Ереван • 1940

բանվորներն ու գյուղացիներն աշխարհում առաջին անգամն են ստեղծել իրենց սեփական բանակը, վրը ծառայում է վոչ թե տերերին, այլ նախկին ստրուկներին, ներկայումս ազատագրված բանվորներին ու գյուղացիներին»<sup>1</sup>:

Կարմիր Բանակն արմատապես տարբերվում է գոյութուն ունեցած և գոյութուն ունեցող բոլոր բանակներից: Սա նոր տիպի բանակ է, վորպիսին դեռ չի խմացել մարդկության պատմությունը:

Մինչհեղափոխական Ռուսաստանում բանակն աշխատավորներին ճնշելու գործիք էր: Յարական բանակը պաշտպանում էր չահագործողներին—կալվածատերերի և կապիտալիստներին—չահերը: Զինվորների, զորանոցային կյանքը ցարական Ռուսաստանում—«ժողովուրդների բանտում», հուսահատականորեն ծանր էր: Ժողովրդական առածն ասում էր. «Զինվոր լինել, միևնույն է թե բանտում նստել»:

«Ռուսաստանում զորանոցը,—գրում էր Վլադիմիր Իլյիչ Լենինը,—միշտ և ամեն տեղ ամեն տեսակ բանտից ել վատ էր. վոչ մի տեղ այնպես չէին խեղդում ու ճնշում անհատականությունը, ինչպես զորանոցում, վոչ մի տեղ այնպես չէին ծաղկում խոշտանդումը, ծեծը, մարդու անարդանքը»<sup>2</sup>:

Յարական բանակի զինվորը միանգամայն իրավագուրկ էր: Ել ի՛նչ խոսենք քաղաքական իրավունքների մասին, նա մարդկային հասարակ իրավունքներ նույնիսկ չուներ: Նրան մարդ չէին համարում և անվանում էին ուղղակի «ստորին աստիճանավոր» (НИЖНИЙ ЧИН): Նրան արգելված էր հաճախել հասարակական այգիները, ծխել սպայի ներկայությամբ և այլն: Դադանակային կարգապահությունը և ասպտակ տալը—ռուսական զինվորի «դաստիարակության» ամբողջ սխտեմը հետապնդում էր մի նպատակ՝ դարձնել նրան իրավագուրկ և կամագուրկ գորչ անասուն—«թնդանոթի միս»:

Ահա թե ինչու յերևտասարդությունը հեղափոխությունից առաջ չէր ուզում բանակ դնալ: Յարական բանակի զինվորահալվաքը հին ժամանակ հսկայական ժողովրդական աղետ էր հանդիսանում: «Յեկ ժողովրդի սարսափը «զինվորահալվաք» խոսքը հնչելիս՝ նման էր մահապատժի սարսափին»,—գրում էր ռուս

մեծ բանաստեղծ Նեկրասովը: Առաջ յերևտասարդ բանվորներն ու գյուղացիները գնում էին բանակ այնպես, ինչպես մահապատժի կամ տաժանավայր: Թե ինչ աստիճան ժողովուրդը վախենում էր ցարական բանակում ծառայելուց, այդ մասին ասում է ժողովրդական չաստուշկան.—

Не из чести, не из платы  
Не пойдет мужик в солдаты!  
Пальцы рубит, зубы рвет,—  
В службу царскую нейдет!<sup>1</sup>

Որհնդային յերևտասարդությունը գնում է Կարմիր Բանակի շարքերը լիակատար պատրաստակամությամբ, հսկայական հրճվածքով և վողեորությամբ: Կարմիր Բանակի շարքերն ընկնել, հրետավոր, տանկիստ կամ ողաչու դառնալ—դա հարյուր—հազարավոր խորհրդային յերևտասարդ հայրենասերների նյլիրական յերազն է:

Մեր մայրերն ու հայրերը ուրախությամբ են ճանապարհ դնում իրենց զավակներին դեպի զորակոչակայանները, հստատանում են, վոր իրենց զավակները մտնում են Կարմիր Բանակի շարքերը: Մեր յերկրում զորակոչը վեր է ածվում համաժողովրդական տոնակատարության: Զորակոչի օրերին խորհրդային հայրենասիրության զգացմունքը դեպի իր հայրենիքը, դեպի իր հարազատ բանակը տածվող սիրո զգացմունքը համակում է մեր յերկրի բոլոր աշխատավորներին:

Կարմիր Բանակը—սա միանգամայն նոր բանակ է: Նա պաշտպանում է աշխատավորներին շահերը, սոցիալիզմի յերկրի շահերը, պահպանում է Հոկտեմբերի նվաճումներն ու յերջանիկ սոցիալիստական հայրենիքը կապիտալիստական գիշատիչների վրանդություններից:

«... Առաջին անգամ աշխարհում ստեղծված է մի բանակ, զինված մի ուժ, վորը գիտե, թե ինքը ինչի համար է կռվում, և աշխարհում առաջին անգամ բանվորներն ու գյուղացիները. պարզ կերպով գիտակցում են, վոր իրենք պաշտպանում են խորհրդային սոցիալիստական հանրապետությունը, աշխատավորների իշխանությունն ընդդեմ կապիտալիստների, պաշտպանում են

<sup>1</sup> Ստալին, Կարմիր Բանակի յերեք առանձնահատկությունների մասին, էջ 7, Պետքաղհրատ, 1939 թ.:

<sup>2</sup> Լենին, Կ. VIII, էջ 563:

<sup>1</sup> Վոչ պատվի համար, և վոչ ել շահից՝  
Սալդաթ չի՛ դնում մուժիկը ահից:  
Մատներն է կտրում, ատամը ջարդում,  
Միայն թե չընկնի սալդաթի դարդում:

համալսարհային պրոլետարական սոցիալիստական հեղափոխութեան գործը»<sup>1</sup>։

Զինվորական ծառայութիւնը Կարմիր Բանակում, ինչպէս ասում է Ստալինյան Սահմանադրութիւնը, ԽՍՀՄ-ի քաղաքացիների պատիւովոր պարտականութիւնն է։ Հայրենիքի պաշտպանութիւնը խորհրդային յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է։ Ստալինյան Սահմանադրութեան 132-րդ հոդվածը հիմք դարձաւ ընդհանուր զինվորական պարտականութիւնների վերաբերյալ նոր որոշումներ, վորն ընդունվեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի վոչ հերթական Չորրորդ Սեսիայի կողմից։ Նոր որոշումը հաստատուն հիմք ստեղծեց Կարմիր Բանակի և Ռազմա-Օդ-վային Նախարարի հետագա ամբապնդման համար։

«Յեւ վ յեթե պատերազմ բռնկվի այն դասակարգի դեմ, վորի ուժերով յես ապրում և աշխատում եմ,—գրում էր պրոլետարական մեծ գրող Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին 1929 թվին,—յես եւ կզնամ իրրե շարքային մարտիկ նրա բանակը։ Կզնամ վո՛չ թե նրա համար, վոր—գիտեմ, հենց նա կհաղթի,—այլ նրա համար, վոր Խորհրդային Միութեան բանվոր դասակարգի մեծ, արդարացի գործը—այդ իմ որինական գործն է, իմ պարտքն է»<sup>2</sup>։

Կարմիր Բանակը բոլշևիկյան, մարքսիստական-լենինյան դաստիարակութեան հիանալի դպրոց է։ Մեր կարմիրբանակայինները գրագետ, կուլտուրական խորհրդային քաղաքացիներ են, վորոնք դաստիարակված են ինտերնացիոնալիզմի մոդով, վորոնք զոգված են անասանելի հեղափոխական կարգապահութեամբ, վորոնք անհաշտ են ժողովրդի թշնամիներին վերաբերմամբ։ Կուսակցութիւնը նրանց մեջ դաստիարակում է յերկաթե տոկունութիւն և անխորտակելի զիմացկունութիւն։ Նրանք անսահմանորեն նվիրված են բոլշևիկյան կուսակցութեան գործին, Լենինին—Ստալինին մեծ գործին։

Մեր բանակը սոցիալիստական կուլտուրայի և սոցիալիստական լուսավորութեան դպրոց է հանդիսանում։

«Կարմիր Բանակը՝ ամբողջութեամբ, հասկանալի յես, խաղաղ ժամանակ, հանդիսանում է մի հսկայական ծախարուն դպրոց, վորտեղ հարյուր—հազարավոր լավ խորհրդային մարդիկ մշտա-

պէս սովորում են վոչ միայն իրենց գործը՝ ըստ մասնագիտութեան, տիրապետում են թշնամուն ջախջախելու արվեստին, այլև վորտեղ բոլորը—մարտիկից սկսած մինչև բարձր հրամանատարութիւնը՝ սովորում են նաև քաղաքականութիւն, լրացնում են իրենց գիտելիքները, տիրապետում են մարքսիզմ-լենինիզմի թեորիային»<sup>1</sup>։

Կարմիր Բանակի ամեն մի ստանձին զորամասում մարտիկների, հրամանատարների, քաղաշխատողների համար կազմակերպված է ուսուցում՝ ռազմական, քաղաքական, հանրակրթական։ Յերիտասարդ բանվորները, կուլտուրականները և ծառայողները Կարմիր Բանակի շարքերում ընդլայնում են իրենց քաղաքական մտահորիզոնը, բարձրացնում են իրենց կուլտուրական մակարդակը, ձեռք են բերում ոգտակար գիտելիքներ և վերադարձում են գործարան, կուլտուսութիւն կամ հիմնարկութիւն՝ վորպէս կուսակցական և անկուսակցական բոլշևիկներ, վորպէս ակախի աշխատողներ, մասսաների կազմակերպիչներ ու ղեկավարներ։

«Խորհուրդներ Միութեան մեջ,—գրում էր Գորկին,—Կարմիր Բանակի մարտիկը դաստիարակվում է վորպէս նոր կուլտուրա կառուցող, նա վոչ միայն իր ժողովրդի պաշտպանն է, այլև—չատ բանում և ավելի ու ավելի—դառնում է նրա ուսուցիչը»<sup>2</sup>։

Զինվորական ծառայողները ԽՍՀՄ-ում լիիրաւ խորհրդային քաղաքացիներ են։ Ստալինյան Սահմանադրութեան մեջ գրված է.

«Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրաւունքից ոգտվում են բոլոր քաղաքացիների հետ հաւասարապես»։

Այս իրաւունքն իրականացվում է լիովին։ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի մեջ սոցիալիզմի յերկրի ժողովուրդները Կարմիր Բանակից ընտրեցին 86 ղեկուսատ։ Հազարավոր զինվորական ծառայողներ ընտրվել են միութենական և ավտոնոմ հանրապետութիւնների Գերագույն Խորհուրդների և աշխատավորների ղեկուսատաների տեղական Խորհուրդների ղեկուսատաներ։ Մեր բանակն աշխարհում միակ բանակն է, վորն ապրում է իր յերկրի քաղաքական և հասարակական լիարյուն կյանքով։

<sup>1</sup> Լենին, Հ. XXIV, էջ 176։

<sup>2</sup> Горький, Если враг не сдается,—его уничтожают, էջ 44, Госполитиздат, 1938 թ.։

<sup>1</sup> Վորոշիլով, Ճառ Համ(ր)ի XVIII համագումարում, էջ 30, Պետքաղհրատ, 1939 թ.։

<sup>2</sup> Горький, Если враг не сдается,—его уничтожают, էջ 16, Госполитиздат, 1938 թ.։

«Բոլոր բուրժուական յերկրներէ բանակներին արդեւրում է, համեմայն դեպս շարքայիններին և սպայական մանրունքին, անպայմանորեն արդեւրում է քաղաքականութեամբ զբաղվել: Այնտեղ քաղաքականութեան համար պատժում են: Մեր բանակն ուժեղ է քաղաքական գիտակցութեամբ և քաղաքական ակտիվութեամբ, այստեղից ել ԲԳԿԻ-ի հրամանատարական և այլ կազմերին առաջադրվող պահանջները—ուզո՞ւմ ես քո տեղում լինել ոգտակար և քո ստորադրյալների համար պիտանի, ուզո՞ւմ ես ազնվորեն ծառայել քո ժողովրդին և լենինին—Ստալինի գործին, ուզո՞ւմ ես լինել իսկական բոլշևիկ լենինյան,—սովորի՞ր, շատ սովորի՞ր, անընդհատ կատարելագործվի՞ր, անգիր խմացի՞ր քո մասնագիտութիւնը, այլապէս քեզ հանձնարարված գործը գլուխ չես բերի, կխայտառակվես ստորադրյալներով առաջ, իսկ վր զլխավորն ե, —անպայման յեղի՞ր քաղաքականապէս դրադետ, բոլշևիկներն ակտիվ, յեղի՞ր վոչ միայն լավ, անպայման լավ մասնագետ, յեթե չես կարող լինել դերազանց, բայց յեղի՞ր սոցիալիստական պետութեան նույնքան լավ, քաղաքականապէս կոփված քաղաքացի, նրա ոգտակար կառուցողը»<sup>1</sup>:

Կապիտալիստական յերկրներում բանակներն աշխատավորներին ճնշելու գենք են, չահագործողների իշխանութեան պատվար են:

Միայն Կարմիր Բանակն է կանգնած միլիոնավոր ժողովրդական մասսաների չահերի պաշտպանութեան դիրքերում, ապահովելով սոցիալիստական մեծ հայրենիքի խաղաղ աշխատանքը:

За то, чтоб родина цвела,  
За то, чтоб молодость была,  
За мир, за правду в мир пришла  
Красная  
Армия!

(Сулейман Стальский) 2

<sup>1</sup> Վոբոշիվով, Ճառ ՀամԿ(Բ)Կ XVIII համագումարում, էջ 30, Պեղքադհրատ, 1939 թ.:

<sup>2</sup> Վորպեսդի ծաղիկ՝ հայրենիքը իմ,  
Վորպեսդի լինի ջահելութիւն հար  
Ուղղադրութեան ու ճշմարտութեան համար  
Աշխարհ յեկավ մեր Բանակը

Կարմիր:

(Սուլեյման Ստալսկի)

## ԼԵՆԻՆԵՆ ՈՒ ՍՏԱԼԻՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՆ ԵՆ

Կարմիր Բանակն ուժեղ է իր շարքերի միասնութեամբ, յերկաթե կարգապահութեամբ, պրոլետարական գործին ցույց տալիս իր նվիրվածութեամբ և անձնագոհութեամբ: Այդ հատկութիւնները կոփել է բոլշևիկյան կուսակցութիւնը—Սորհուրդների Յերկրի բանակի ղեկավարն ու դաստիարակիչը:

«Մեր հաղթանակների կազմակերպչի բարձր պատիվը պատկանում է... մեր յերկրի առաջավոր բանվորների մեծ կոլեկտիվին—Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեանը»<sup>1</sup>:

Կարմիր Բանակն ստեղծել է բոլշևիկներին կուսակցութիւնը լենինի և Ստալինի գլխավորութեամբ: Յերկար տարիների ընթացքում լենինն ու Ստալինը ղեկավարել են Սորհուրդային հանրապետութեան պաշտպանական հզորութեան ուժեղացումը, իսկ լենինի մահից հետո Սորհուրդների Յերկրի պաշտպանական հզորութիւնն անդադար չարժանաւել է ամրացնել ընկեր Ստալինը:

1918 թվին ռուս կալվածատերերն ու կապիտալիստները մյուս յերկրների կապիտալիստների հետ միասին ռազմական ինտերվենցիա կազմակերպեցին Սորհուրդների Յերկրի դեմ: Նրանք իրենց նպատակ էյին դրել՝ տապալել բանվորների և գյուղացիների իշխանութիւնը և վերստին ստրկացնել մեր յերկիրը: Ոտարեկրյա զավթիչների և բուրժուական կալվածատիրական սպիտակգլարդիականութեան ռազմաթիվ հրոսակաւմբը բոլոր կողմերից շարժվեցին Սորհուրդային յերկրատարդ Հանրապետութեան վրա, փորձելով նրան խեղդել սովով ու բռնադատով: Սկսվեց Ռուսաստանի ժողովուրդների քաղաքացիական պատերազմը Սորհուրդային իշխանութեան արտաքին և ներքին թշնամիների դեմ:

<sup>1</sup> Сталин, Об Октябрьской революции, Сборник статей и речей, № 60, 1932 թ.:

«Որհնդային Ռուսաստանում դրուժյունն այդ ժամանակաշրջանում ծանր եր: Չեր բավականանում հացը: Չեր բավականանում միսը: Սովը տանջում էր բանվորներին: Մոսկվայի և Պետրոգրադի ամեն մի բանվորին յերկու օրվա համար տրվում էր մեկ ութերորդական գրվանքա հաց: Լինում էին սեր, յերր բոլորովին հաց չեր տրվում: Գործարանները չեյին աշխատում, կամ համարյա չեյին աշխատում. հումքը, վառելիքը չեր բավականանում: Բայց բանվոր դասակարգը չեր վհատում: Չեր վհատում բոլշևիկների կուսակցութունը: Այդ ժամանակաշրջանի անասելի դժվարությունները և դրանց դեմ մղվող կատաղի պայքարը ցույց տվին, թե ինչպիսի անսպառ յեռանդ է թաղնված բանվոր դասակարգի մեջ և վորքան մեծ, անչափ ե բոլշևիկյան կուսակցության հեղինակության ուժը»<sup>1</sup>:

Որհնդային կառավարութունը կոչ արձակեց. «Սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ է»:

Կուսակցութունն աշխատավորներին վտանգի հանց պայքարելու ոտարերկրյա խտերվենտների և ռուս սպիտակգվարդիականների դեմ և ձեռնամուխ յեղալ կանոնավոր Կարմիր Բանակի ստեղծմանը, վորը տողորված լիներ ամենախստագույն կարգապահությամբ:

«Կամ,—ասում եր մեր կուսակցության VIII համագումարում ընկեր Ստալինը,—մենք կստեղծենք իսկական բանվորա-դուրացիական, առավելապես դուրացիական, խիստ կարգապահ բանակ և կպաշտպանենք հանրապետությունը, կամ թե կկորչենք»:

Այդպիսի բանակ ստեղծվեց:

«Այդպիսի բանակ մենք ստեղծեցինք, ստեղծեցինք այն պատճառով, վոր Լենինը Ստալինի հետ միասին անձամբ գլխավորեցին այն ժամանակվա համար այդ դժվարին գործը, գլխավորեցին և տիտանական աշխատանքով մինչև վերջը հասցրին այն»<sup>2</sup>:

Ոտարերկրյա խտերվենտների և ռուսական սպիտակգվարդիականների դեմ մղած պատերազմում Կարմիր Բանակը լիակա-

տար հաղթանակ տարավ: Նա ջախջախեց Որհնդային իշխանության թշնամիների անհաշիվ հրոսակաթմբերը և պատվով պաշտպանեց Որհնդային Հանրապետության պետական անկախությունն ու ազատ գոյությունը:

Լենինը լեռնագործ բանվորների Համառուսական I հիմնադիր համագումարում արտասանած ճառում, 1920 թ. ապրիլի 1-ին, հայտարարեց.

«Յերբ արյունալի ֆրոնտում կալվածատերերն ու կապիտալիստները փորձում էին խորտակել խորհրդային իշխանությունը Ռուսաստանում, թվում եր, թե Որհնդային հանրապետության բանն անհուսալի յե, թե Որհնդային Ռուսաստանը՝ ամենից թույլ, ամենից հետամնաց, ամենից քայքայված յերկիրը, չի կարողանա դիմանալ ամբողջ աշխարհի կապիտալիստների դեմ... Բայց, այնուամենայնիվ, այդպիսի հրաշքը հնարավոր յեղավ, և այդ յերկու տարվա ընթացքում Որհնդային Ռուսաստանը կատարեց այդ հրաշքը: Աշխարհի ամենահարուստ տերությունների դեմ մղած պատերազմում Որհնդային Ռուսաստանը հաղթող դուրս յեկավ»<sup>1</sup>:

Պրոլետարական հեղափոխության թշնամիների դեմ տարած հաղթանակներն անխղիւրդ են կապված են Լենինի և Ստալինի Կարմիր Բանակի կազմակերպիչների և առաջնորդների անունների հետ: Լենինի և Ստալինի ղեկավարությամբ Կարմիր Բանակը հաղթականորեն վերջացրեց քաղաքացիական պատերազմը: Լենինն ու Ստալինը Որհնդային հանրապետության ղինված ժողովրդի հերոսական հաղթանակների վոգեչնչողներն են:

\* \*

Կարմիր Բանակի հաղթանակներն ապահովված էին Լենինի հանձարեղ տակտիկայով և ստրատեգիայով:

«Լենինը՝ մարդկության հանձարը, պրոլետարական հեղափոխության մեծագույն ստրատեգը, բոլշևիկների կուսակցության առաջնորդն ու կազմակերպիչը՝ Կարմիր Բանակի կազմակերպիչն ու առաջնորդն է յեղել: Պրոլետարական հեղափոխության ղինված ուժերի շինարարության բոլոր կարևորագույն հարցերը մշակել է կուսակցութունը Լենինի ցուցումներով:

Լենինյան ղեկավարությունն այն հզոր ուժն էր, վորն ապահովեց Կարմիր Բանակին նրա մեծ և փառավոր հաղթանակները

<sup>1</sup> «Համի(ք)ի համառոտ դարձնիք», էջ 308, Պետրոգրադ, 1938 թ.:

<sup>2</sup> Ворошилов, Сталин и строительство Красной Армии, «Правда».

21 դեկտեմբերի, 1939 թ.:

<sup>1</sup> Լենին, հ. XXV, էջ 131—132:

քաղաքացիական պատերազմի դաժան մարտերում» (Վոբոշիով) :

Լենինը դեռևս հեղափոխական շարժման արշալույսին պարզ տեսնում էր պրոլետարիատին զինելու անհրաժեշտությունը և այդ գործը կուսակցության ամենակարևոր խնդիրն էր համարում: Արդեն 1905 թվին, ռուսական առաջին հեղափոխության ժամանակ, նա խնդիր դրեց մարտական ջոկատներ, խմբեր և դրոժինաներ՝ կազմակերպելու, վորոնք պրոլետարական հեղափոխության զինված ուժերի սաղմը հանդիսացան:

Դեռևս Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, 1917 թվին բոլշևիկները յերկրի արդյունաբերական կենտրոններում ստեղծեցին Կարմիր գվարդիայի ջոկատներ: Այդ ջոկատներն այն կմախքն էին, վորի հիման վրա քաղաքացիական պատերազմի տարիներում ստեղծվեց Կարմիր Բանակը:

Վլադիմիր Իլյիչ Լենինը—Հոկտեմբերյան զինված ապստամբության հանձարեղ կազմակերպիչը, պատրաստվելով կալվածատիրական—կապիտալիստական հասարակակարգի դեմ վճռական գրոհի, ուսուցանում էր կուսակցությանը, վոր զինված ապստամբությանը պետք է վերաբերվել վորպես արվեստի: Նա նշեց Հոկտեմբերյան զինված ապստամբության կոնկրետ պլանը, վորոշեց զինված ուժերի դասավորումը և մատնանշեց, թե վորտեղից և ինչպես հարձակում կատարել և վճռական հարված հասցնել:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակից հետո Լենինը բազմիցս մատնացույց էր անում, վոր տապալված շահագործողների դասակարգերը դաժանորեն կղեմադրեն և վորձ կանեն վերականգնելու իրենց տիրապետությունը: Դրա հետ միասին Վլադիմիր Իլյիչը նախադուշակում էր խորհրդային հանրապետության՝ միջազգային իմպերիալիզմի հետ ընդհարվելու անխուսափելիությունը: Վոբոշիով էլ յեղբ: Լենինի հանձարը թելադրեց՝ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ստեղծման մեջ:

1918 թ. հունվարի 28-ին Վլադիմիր Իլյիչը ստորագրեց Կարմիր Բանակ ստեղծելու վերաբերյալ դեկրետը, վորի մեջ նշված էին սոցիալիզմի բանակի շինարարության հիմնական սկզբունքները:

Յերբ բորբոքվեց քաղաքացիական պատերազմը, Լենինն աչալըջորեն հետևում էր սպիտակ-գվարդիականների և ինտերվենտների նենգ մտադրություններին և հանձարեղ կերպով դե-

կավարում էր Կարմիր Բանակի՝ նրանց դեմ մղած հաղթական կռիվը:

Վլադիմիր Իլյիչը հսկայական ուշադրություն էր նվիրում Կարմիր Բանակի քաղաքական դաստիարակությանը: Նրա ցուցումով 1918 թ. ապրիլին Բանակի մեջ մտցվեց զինվորական կոմիսարների ինստիտուտ:

Լենինը հիմնադրության ժամանակ էլ չէր դադարում հետևել մարտական գործողությունները ընթացքին Փրոնտներում, հոգ էր տանում Կարմիր Բանակի զորամասերը սպառազենքով և պարենով ապահովելու մասին:

Վլադիմիր Իլյիչը համատում էր, վոր Կարմիր Բանակը մոտ ապագայում պրոլետարիատի դեկտատուրայի անխորտակելի ուժը կդառնա: Համառուսական ԿԳՎ-ի և Մոսկվայի խորհրդի՝ Փարբիկա-գործարանային կոմիտեները ու պրոֆեսիոնալ միությունների ներկայացուցիչների հետ միասին դումարված 1918 թվին Հոկտեմբերի 3-ի միացյալ նիստին ուղղած նամակում Լենինը դնում էր յերեք միլիոնանոց բանակ ստեղծելու խնդիրը:

«Ստեղծվում է բանակ,—գրում էր Լենինը,—Կարմիր բանակն այն բանվորների ու չքավոր գյուղացիների, վորոնք պատրաստ են ամեն տեսակ զոհաբերություն անելու սոցիալիզմի պաշտպանության համար: Բանակն ամրանում և կռիվում է չեխոսլովակների և սպիտակ-գվարդիականների դեմ մղվող ճակատամարտերում: Հիմքն ամուր է դրված, հարկավոր է շտապ կերպով կառուցել բուն իսկ շենքը:

Մենք վճռել ենք ունենալ 1.000.000 մարդուց կազմված բանակ զարնանը, մեզ հիմա հարկավոր է յերեք միլիոնանոց բանակ: Մենք կարող ենք այն ունենալ: Յեվ մենք այն կունենանք»<sup>1</sup>:

\* \* \*

Լենինի հետ ձեռք ձեռքի տված, Կարմիր Բանակի հաղթանակները կազմակերպում էր ընկեր Ստալինը—Լենինի հավատարիմ զինակիցը, պրոլետարական հեղափոխության հանձարեղ գործարարը:

«Հաղթանակած սոցիալիզմի զինված պաշտպանությունը,—գրում էր ընկեր Վոբոշիովը,—Խորհրդային Միության Կարմիր Բանակի շինարարությունը, նրա պատմությունը, նրա ուժը և

<sup>1</sup> Լենին, 4. XXIII, էջ 217:

լուն: Իմ պարտքն եմ համարում հայտնել, վոր յես այսուհետեւ ել պիտի գործեմ այդ ձևով, չնայելով դեպի գիտությունը տա՝ ծած իմ ամբողջ ակնածութեանը»<sup>1</sup>:

Բայց այդպէս յեղալ եւ՝ Յարեցինում, այդպէս յեղալ եւ՝ հարաւային, դենիկինյան, Փրոնտում:

Ընկեր Ստալինը մեր բանակին ուսուցանում էր հարձակման արվեստը: Բանակի հարձակումը հաջող կարող է լինել միայն այն դեպքում, յերբ ժամանակին ամբապնդվեն նվաճված դիրքերը, մոտ բերվեն ռեզերվները, կարգի բերվի թիկունքը և իրադրութեան փոփոխմանը համապատասխան վերախմբավորեն զինված ուժերը:

«Լեհական զորքերի սխալը 1920 թվին, յեթե վերցնենք դործի միայն ռազմական կողմը, այն է, վոր նրանք արհամարհեցին այս կանոնը: Սրանով է իմիջի ալլոց՝ բացատրվում, վոր հախուռն կերպով մինչև Կիև սլանալով՝ նրանք ստիպված էին հետ նույնպէս հախուռն կերպով հետ սլանալ մինչև Վարշավա»<sup>2</sup>:

Ստալինի ռազմական ծառայութեանը նշվեցին Լենինի նախաձեռնութեամբ՝ Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախադահլութեան 1919 թ. նոյեմբերի 27-ի վորոշմամբ, վորի մեջ ասված է.

«Մահացու վտանգի բույսերն, յերբ թշնամիները սեղմ ողակով ամեն կողմից շրջապատված խորհրդային իշխանութեանը հետ էր մղում հակառակորդի հարվածները, այն բույսերն, յերբ բանօրար-գյուղացիական հեղափոխութեան թշնամիները 1919 թվականի հուլիսին մոտենում էին Կարմիր Պիտերին և արդեն տիրել էին Կրասնայա Գորկային, խորհրդային Ռուսաստանի համար այդ ծանր ժամին, համառուսական ԿԳԿ նախադահլութեան կողմից մարտական պոստում նշանակված Իոսիֆ Վխուսթիստովիչ Ջուդաշվիլին (Ստալինը) իր յեռանդով և անդուլ աշխատանքով կարողացավ համախմբել Կարմիր Բանակի յերբնող շարքերը:

Ինքը մարտական գծի շրջանում գտնվելով, մարտական կրակի տակ՝ նա անձնական որինակով վրդեփորում էր խորհրդային հանրապետութեան համար մարտնչողների շարքերը:

Պետրոգրադի պաշտպանութեան գործում մատուցած բոլոր

<sup>1</sup> Վորոշիլով, Ստալինը և Կարմիր Բանակը, Էջ 20, Հայկուհրատ, 1938 թ.:

<sup>2</sup> Ստալին, Լենինի գծի հարցերը, Էջ 430, Հայհրատ, 1937 թ.:

ծառայութեանները, ինչպէս և հարաւային ճակատում նրա կատարած հետադա անձնուրաց աշխատանքը հավերժացնելու համար, համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն վորոշեց պարգևատրել Ի. Վ. Ջուդաշվիլուն (Ստալինին). «Կարմիր Դրոշի» շքանշանով:

Ստալինը ամէց ԽՍՀՄ-ի զինված ուժերի զարգացման պարզ հեռանկարը սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում:

«Անցած բոլոր տարիների ընթացքում նա յեղել է Կարմիր Բանակի հզորութեան ամբապնդման ամբողջ աշխատանքի վրդենչողը, հզորութեան, վորը ԽՍՀՄ-ի պետական անկախութեան վճռողական յերաշխիքն է հանդիսանում: Այս բոլորի շնորհիվ մեր պետութեանը վերջնականապէս ամբապնդվեց, և նրա համար սարսափելի չեն արտաքին վրեկիցե վտանգութեաններ» (Մոլոտով):

Կուսակցութեան XVIII համագումարում ասված իր գեկուցման մեջ ընկեր Ստալինը զարգացրեց մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը սոցիալիստական պետութեան մասին, պետութեան, վորը կպահպանվի նաև կոմունիզմի ժամանակ, քանի դեռ մնում է կապիտալիստական շրջապատում և հարձակման վտանգը՝ դրսից:

Ստալինը բացառիկ նշանակութեան է տալիս Կարմիր Բանակի կոմիտարների ինստիտուտին:

2ինվորական կոմիտարները հանդիսանում են կուսակցութեան պատգամաբերները բանակում, «ռազմական գործի հոգին» (Ստալին): Նրանց դերը մեր յերկրի պաշտպանունակութեան ամբապնդելու գործում հսկայական է: Քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում զինվորական կոմիտարները Կարմիր Բանակում քաղաքական աշխատանքի լավագույն կազմակերպիչներն էին: Նրանք մարտիկներին մօբիլիզացիայի էին յենթարկում մարտական խնդիրները կատարելու համար, կարմիրբանակայիններին գրոհի էին տանում թշնամու վրա:

«Կարմիր Բանակն իր կազմում ուներ այնպիսի յերեւելի կազմակերպիչներ ու ագիտատորներ, ինչպիսիք էին զինվորական կոմիտարները, վորոնք իրենց աշխատանքով ցեմենտում էին կարմիրբանակայինների շարքերը, արմատացնում էին նրանց մեջ զինացիական այն մարտական քաջարիութեան վրդին, յեռանդալին, արագ ու անողորմարար կասեցնում էին հրամանատարական կազմի առանձին անձերի դավաճանական գործողութեանները և, ընդհակառակը, համարձակորեն ու վճռականորեն

պաշտպանում և յայն կուսակցական ու վոչ-կուսակցական այն հրամանատարների հեղինակութունն ու համբավը, վորոնք ցույց եյին տվել իրենց նվիրվածութունը խորհրդային իշխանութանը և ընդունակ եյին հաստատ ձեռքով առաջ տանելու Կարմիր Բանակի զորամասերի ղեկավարութունը:

«Առանց գինկոմի մենք Կարմիր Բանակ չեյինք ունենա» — ասում եր Լենինը<sup>1</sup>:

Ընկեր Ստալինը դեռ 1919 թվին անսահման պարզությամբ և համառոտ կերպով ձևակերպեց գինկոմիական կոմիսարների խնդիրները:

«Գնդի կոմիսարը, — գրում եր նա, — հանդիսանում ե իր գնդի քաղաքական և բարոյական ղեկավարը, նրա նյութական և հոգեկան շահերի առաջին պաշտպանը: Յեթե գնդի հրամանատարը գնդի գլուխն ե, ապա կոմիսարը պետք ե լինի իր գնդի հայրն ու հոգին»:

Ընկեր Ստալինը Կարմիր Բանակի առաջին կոմիսարն ե, նրա հաղթանակների կազմակերպիչն ու վոգեչնողը: Քաղաքացիական պատերազմի կրակոտ տարիներին նա ցույց տվեց մարտական քաղաքական աշխատանքի անգերադանցելի որինակներ, Կարմիր Բանակին հաղթանակից հաղթանակ տանելով: Նրա հետ միասին Կարմիր Բանակի հաղթանակները կազմակերպում եյին պրոլետարական զորավարներ, նոր տիպի ռազմական ղեկավարներ՝ Ֆրոնզեն, Վորոշիլովը, Բուդյոնին: Կարմիր Բանակի ստեղծման վրա աշխատում և յայն Լենինի և Ստալինի հետ մեկտեղ մեր կուսակցութան այնպիսի գործիչներ, ինչպես՝ Վ. Մ. Մորոտովը, Մ. Ի. Կալինինը, Յա. Մ. Սվերդլովը, Լ. Մ. Կազանովիչը, Գ. Կ. Որլոնիկիձեն, Ս. Մ. Կիրովը, Վ. Վ. Կուլբիչևը, Ա. Ի. Միկոյանը, Ա. Ա. Ժդանովը, Ա. Ա. Անդրեյևը, Լ. Զ. Մեխլիսը և ուր.:

Խորհրդային Ժողովուրդը հպարտանում ե քաղաքացիական պատերազմի իր հերոսական գինկոմիական կոմիսարներով: Նա յերբեք չի մոռանա Ֆուրմանովի՝ 25-րդ Չապայևյան դիվիզիայի կոմիսարի և շատ ուրիշների անունները: Մեր յերկրի աշխատավորները խիստ մեծարում են մարտական այն կոմիսարների հիշատակը, վորոնք իրենց կյանքը զոհել են խորհրդային հայրենիքի յերջանկության համար: Խորհրդային հանրապետության

Թշնամիների դեմ մղած մարտերում ընկան Առաջին Հեծյալ բանակի կոմիսարներ Բախտուրովը, Մուսինը, Շեպելևը: Խասան լճի մոտ տեղի ունեցած մարտերում անվահների մահով ընկավ կոմիսար Պոթաբսկին: Իր արյունակից յեղբայրներին — ուկրաինացիներին ու բելուսներին ազատագրելու համար լեհական պաների դեմ մղված պայքարում իր կյանքը տվեց կոմիսար Ժվանչենկոն: Նրանց տեղը կանգնեցին հարյուր ու հազարավոր խորհրդային ուրիշ հայրենասերներ, վորոնք նույնպիսի անձնագոհությամբ, նույնպիսի հերոսությամբ մարտնչում են ԽՍՀՄ Թշնամիների դեմ՝ կոմունիզմի գործի համար: Սպիտակֆիներների դեմ մղվող մարտերում կոմիսարներն ու քաղաշխատողները հայրենիքի համար հերոսական պայքար մղելու որինակներ են ցույց տալիս: Ֆիննական սպիտակգլխավորակալության դեմ մղվող մարտերում ցուցաբերած արիւնքից համար Խորհրդային Միության հերոսի կոչում ե շնորհված կոմիսար Բալասանովին, քաղղեկ Կապուստինին, ավագ քաղղեկ Պոնոմարչուկին:

Զինվորական կոմիսարները կուսակցության, ընկեր Ստալինի կողմից կոչված են Կարմիր Բանակի մարտունակութունն ե՛լ ավելի բարձրացնելու, կարմիր մարտիկների շարքերն ե՛լ ավելի խիտ համալրման, սոցիալիզմի յերկրի բանակն անպարտելի դարձնելու:

Պաշտպանության Ժողովրդական կոմիսար՝ Խորհրդային Միության մարշալ Կ. Յե. Վորոշիլովը Կարմիր Բանակի տասնամյակի որը, նշելով կոմիսարների վճռողական դերը քաղաքացիական պատերազմում, ասում եր.

«Զինվորական կոմիսարը, — հանդիսանալով Կարմիր Բանակում կուսակցական-քաղաքական այն միջուկը, վորի շուրջը կենտրոնացվում եր ամենը, ինչ վոր ամենից ավելի կոմիսարն ու քաղաքականապես կայուն և բարոյապես ամուր եր, — փաստորեն բանակի հոգին եր»:

«Առանց իսկական քաղաշխատողների և գինկոմիական կոմիսարների մեզ մոտ չի կարող լինել այն Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը, վորը մեզ հարկավոր ե պայքարի և հաղթանակների համար», — մատնանշել ե ընկեր Վորոշիլովն իր մի ուրիշ ճառի մեջ:

Ընկեր Ստալինն ուսուցանում ե, վոր պրոլետարիատը պետք ե իր քաղաքական, բուլխիկյան ազդեցությամբ ամրապնդի Կարմիր Բանակի բոլոր ողակները, նրա ամբողջ անձնակազմը և

<sup>1</sup> «Համկ(ր)ի պատմության համառոտ դասընթաց», էջ 331, Պետքաղհրատ, 1938 թ.:

ապահովի զորքերի բարձր մարտունակութիւնն ամեն մի պայ-  
մաններում:

Ստալինի անունը—այդ մեր դրոշն է, մեր հաղթանակների  
սխմվոյը: Ստալինի անունը շրթունքներին՝ Կարմիր Բանակի մար-  
տիկները, հրամանատարները և քաղաշխատողները մարտի յեն  
գնում հանուն հայրենիքի, հանուն կոմունիզմի: Ստալինի անու-  
նը շրթունքներին՝ մեր հայրենիքի քաջարի հայրենասերները  
մարանչեցին ու հաղթանակեցին և՛ խոստան լծի շրջանում և՛  
Սալին-Գոլի մոտ, Արեւմտյան Ուկրաինայի և Արեւմտյան Բե-  
լոռուսիայի դաշտերում: Ստալինի անունը շրթունքներին կռիւ-  
նն մղում է կենդանադի զինվորական ուղիւղի զորամասերը Ֆին-  
լանդիայում՝ մաններհեյմյան բանդաների դեմ:

Լենինը բազմիցս մատնանշել է, Վոր Կարմիր Բանակի ամ-  
բապնդումը բոլշևիկյան կուսակցութեան կարեւորագույն խնդիրն  
է: Լենինի գործի մեծ շարունակողը՝ ընկեր Ստալինը լենինյան  
սգո որերին ՍՍՀՄ խորհուրդների II համագումարում մեծ յեր-  
դում տվեց, Վոր «մենք չենք խնայի մեր ուժերը՝ մեր Կարմիր  
Բանակը, մեր Կարմիր Նաւատորմն ամբապնդելու համար»:  
Առաջնորդի յերդումն այժմ իրագործված է կյանքում:

Մեր Կարմիր Բանակն աճեց և ամբապնդ ամբողջ յերկրի  
հետ միասին: խորհրդային Միութիւնը ստալինյան հնգամյակ-  
ների ընթացքում վերածվեց ինքուստրիալ հզոր պետութեան:  
Սոցիալիստական արդիւնաբերութիւնը գինեց Կարմիր Բանակին  
առաջնակարգ ռազմական տեխնիկայով: Ընկեր Ստալինը դեռ  
1933 թվին՝ առաջին հնգամյակի հանրագումարների մասին  
արած զեկուցման մեջ հայտարարեց.

«... խորհրդային Միութիւնը թույլ և պաշտպանութեան  
համար անպատրաստ յերկրից վերածվեց հզոր յերկրի՝ պաշտ-  
պանունակութեան իմաստով, մի յերկրի, Վորը պատրաստ է  
ամեն տեսակ պատահականութիւնների հանդեպ, մի յերկրի,  
Վորն ընդունակ է մասսայական մասշտաբով արտադրելու  
պաշտպանութեան բոլոր արդիական գործիքները և մատակարա-  
րելու դրանք իր բանակին՝ դրսից կատարվող հարձակման դեպ-  
քում»<sup>1</sup>:

Այն ժամանակվանից անցել է յոթ տարի: Այդ ժամանակի ըն-  
թացքում բոլշևիկյան կուսակցութիւնն ու խորհրդային կառա-  
վարութիւնը Վիթխարի աշխատանք կատարեցին Կարմիր Բանա-  
կի մարտունակութեան հետագա բարձրացման գծով: Այդ աշխա-  
տանքի հետեանքով մենք ունենք առաջնակարգ, անպարտելի  
բանակ:

Նշանակալի հաւիով ավելացավ Կարմիր Բանակի թվական  
կազմը: 1934-ից մինչև 1939 թ. ժամանակաշրջանում բանակն  
ավելացավ 103 %-ով, այսինքն ավելի քան յերկու անգամ:

Կարմիր Բանակը հիմա ունի հսկայական քանակութեամբ  
ավտոմատ հրացաններ, ժամանակակից զնդացիքներ և ամեն  
տեսակի հրետանային հրանոթներ, նորագույն տանկեր և ինք-  
նաթիւններ:

Կրակային հզորութեամբ մեր բանակը Վոչ միայն չի գիջում

<sup>1</sup> Ստալին, Լենինի գմի հարցերը, էջ 620, Հայհրատ, 1937 թ.:

կապիտալիստական յերկրները բանակներին, այլև վորոշ չափով առաջ է անցնում նրանցից: Որինակ, Կարմիր Բանակի հրաձգային կորպուսի հրետանային մեկ համադարկը հավասար է 7.136 կիլոգրամի, իսկ Ֆրանսիայի նույն կազմի հրաձգային կորպուսի հրետանային ամբողջ համադարկը—միայն 6.373 կիլոգրամի:

Յեթե համեմատենք այն արկերի քաշը, վոր մեկ բուլետում բաց են թողնում այդ նույն հրաձգային կորպուսները, ապա Կարմիր Բանակին այդ տեսակետից ել ունի զգալի գերազանցություն. մեր հրաձգային կորպուսը մեկ բուլետում կարող է արձակել 66.605 կիլոգրամ մետաղ, իսկ Ֆրանսական կորպուսը նույն այդ ժամանակում կարող է բաց թողնել ընդամենը միայն 51.462 կիլոգրամ:

Կարմիր Բանակի հրաձգային կորպուսի մեկ բուլետի համադարկի ընդհանուր քաշը (զրա մեջ հաշված արկերի, ականների, հրացանային նռնակների և զնդակների քաշը) հավասար է 78.932 կիլոգրամի, իսկ Ֆրանսական կորպուսինը—միայն 60.981 կիլոգրամի:

Կապիտալիստական շատ յերկրներում հրաձգային նույն այդ կազմի կորպուսների համադարկերը շատ ավելի պակաս են Ֆրանսականին:

1934 թվից սկսած շատ ուժեղ կերպով աճեցին մեր ավտոգրահատանկային զորքերը: Մարդկային կազմի ընդհանուր թիվը ավելացավ մինչև 1939 թ. 152,5%-ով: Տանկային պարկը քանակապես աճեց 191%-ով: Ձրահապատ մեքենաները շատացան 7,5 անգամ:

Ուժեղ կերպով նույնպես աճեցին այդ ժամանակաշրջանում նաև ռազմա-օդային ուժերը. անձնակազմն ավելացավ 138%-ով, այսինքն համարյա ավելի քան յերկու ու կես անգամ, իսկ ինքնաթիռների պարկը՝ ամբողջությամբ վերցրած՝ 130%-ով, այսինքն զգալիորեն ավելի, քան յերկու անգամ: Խորհրդային ավիացիան դարձավ ամենաուժեղն աշխարհում: Նրա հարվածող ուժն անսահմանորեն աճեց: Մենք ունենք մի ժամում 500 և ավելի կիլոմետր արագությամբ և 14—15 հազար մետր բարձրությամբ թռչող ինքնաթիռներ (վոչ միայն կործանիչներ, այլև ուժակոծիչներ): Մեր ինքնաթիռների հեռավորության թռիչքները հիանալիորեն ցուցադրեցին Խորհրդային Միության Հերոսներ Չկալովը, Գրոմովը, Կոկկինսկին, Գրիգորովան, Ոսիպենկոն, Ռասկովան և մեր հայրենիքի հռչակ վաստակած մյուս ողաջունները:

Կարմիր Բանակի մարտական տեխնիկայի աճման խիստ վառ պատկեր դժեք ընկեր վորոշելովը՝ ԽՍՀՄ առաջին հրավիրման Գերագույն Խորհրդի Չորրորդ վոչ հերթական Սեսիյում տված զեկուցման մեջ՝ ընդհանուր զինվորական պարտավորությունների որևէի նախագծի մասին 1939 թ. ոգոստոսի 31-ին:

«Տանկեր՝ 1930 թվին յեղել է 100%, այժմ յես նույնիսկ անհարմար եմ զգում հիշատակել թիվը, ուստի յես վոչ թե տոկոսները կհիշեմ, այլ կասեմ, թե քանի անգամ է աճում կատարվել,—մենք տանկեր ունենք 43 անգամ ավելի:

Ինքնաթիռներ 1930 թվին՝ 100%, այժմ՝ 656%, այսինքն՝ աճում 6,5 անգամ:

Ծանր, միջին ու թեթև հրետանի 1930 թվին յեղել է 100%, այժմ՝ 692%, կամ համարյա 7 անգամ ավելի:

Փոքր կալիբրանոց հակատանկային ու տանկային հրետանի 1930 թվի 100%-ի վոխարենն այժմ մենք ունենք 70 անգամ ավելի:

Ձեռքի և հաստոցավոր զնդացիներ 1930 թվի 100%-ի վոխարենն այժմ մենք ունենք 539%, կամ համարյա 5,5 անգամ ավելի:

Յուրաքանչյուր մարտիկին ընկնող մեխանիկական ձիու ուժ 1930 թվին, այն ժամանակվա թվական կազմի համեմատությամբ, մենք ունեցել ենք 3,07: Ներկայումս, յերբ թվական կազմը, ինչպես յես արդեն ասացի, աճել է ավելի քան 3,5 անգամ, մենք ունենք յուրաքանչյուր մարտիկին ընկնող լրիվ 13 ձիու ուժ»<sup>1</sup>:

Մարտական տեխնիկան Կարմիր Բանակում կառավարում են շարքային և պետկազմին պատկանող բարձրորակ մասնագետներ—մեր իսկական խորհրդային ռազմական կադրերը: Կուսակցությունն ու խորհրդային կառավարությունն այդ կադրերին հսկայական ուշադրություն են նվիրում, նրանց պատրաստելով անսահման նվիրվածության վոգով՝ դեպի իրենց հայրենիքը և Լենինի—Ստալինի մեծ գործը:

«Հենց այդպիսի մարդիկ, այդպիսի կադրերն են մեր Կարմիր Բանակը դարձնում առաջնակարգ, անխորտակելի ըստ իր ուժի կազմակերպության, սպառազինման, մարտական պատրաս-

<sup>1</sup> Վոբրաշիով, ընդհանուր զինվորական պարտականության որևէի նախագծի մասին, էջ 6, Պետքազհրատ, 1939 թ.:

տուլթյան և միակն ըստ վոդու ուժի, ըստ քաղաքական ու բարոյական հզորության»<sup>1</sup>։

Կարմիր Բանակի հրամայեցողները հինգ տարվա ընթացքում, — 1934-ից մինչև 1939 — զգալիորեն ավելացավ։ Հրաձգային զորքերում (ներառյալ այդ զորքերի նաև հրետանային զորամասերը) աճեցին 118%-ով, առանձին՝ հրետանային զորամասերում — 124,5%-ով, ավտո-գրահատանկային զորքերում — 154%-ով, ավիացիայում (ներառյալ ինժեներո-տեխնիկական և սպասարկող անձնակազմը) — 148%-ով։

Կարմիր Բանակը հրամանատարներ և զանազան ռազմական մասնագետներ պատրաստելու համար ունի զարգացող մեծ ցանց. 63 ցամաքային ուսումնարան և 32 մասնագիտական ուղաչուական և ուղաչուական-տեխնիկական դպրոցներ։ Բարձրագույն կրթությունն ավարտած ավելի բարձրորակ մասնագետներ պատրաստելու համար Կարմիր Բանակն ունի 14 ռազմական ակադեմիա և 6 մասնագիտական ռազմական ֆակուլտետներ։

Բացի դրանից, Կարմիր Բանակն ամեն տարի պատրաստում է միլիոնի հարյուր հազար մարդ զորամասային դպրոցների և կրտսեր հրամկազմի դասընթացների միջոցով։

Մեր քաջարի Կարմիր Բանակի ուժը, նրա մարտական հիանալի պատրաստությունը ստիպված էյին խոստովանել նույնիսկ մեր թշնամիները։ Յապոնական սպաները, վորոնք սպանվեցին Նոսան լճի շրջանում տեղի ունեցած մարտերում, իրենց հուշատետրերում թողել են հետևյալ գրանցումները.

«Մենք շատ տուժեցինք խորհրդային տանկերից, — գրում էր 75-րդ հետևակ զնդի հրամանատար մայոր Նրանք ոգտագործում էյին տեղանքը, հասնելով մոտիկ տարածություն և կրակ բաց անելով։ Կրակը սարսափելի յեր և շատ զիպուկ։ Հարմարվելով տեղանքին, խորհրդային տանկերը հաճախ կրակը վարելու համար դուրս էյին հանում միայն թնդանոթային աշտարակները։ Մեր զնդակոծումը բավականաչափ գործուն չեր։ Յերբ տանկերն ընկնում էյին մեր հրետանային կրակի տակ, ապա տանկ վարողները հաճախ դուրս էյին ցատկում տանկից և թագնվում տեղանքի ծալքերի մեջ, մինչև վոր մեր կրակը փոխադրվում էր մի այլ ուղղությամբ։

<sup>1</sup> Վորաշիով, ծառ Համկ(ր) XVIII համագումարում, էջ 27, Պետաղ-հրատ, 1939 թ.։

Հաճախ անձնակազմերը տանկերից դուրս էյին հանում զնդացիները և զիպուկ կրակ բացում մեր զինվորների վրա, իսկ այնուհետև նորից նստում էյին տանկերը»։

75-րդ հետևակ զնդի 1-ին գումարտակի հրամանատար մայոր Նականան գրում էր.

«Արդեն յերկրորդ օրն է, ինչ մենք նստած ենք խրամատներում, իսկ խորհրդային բանակն ակտիվություն է ցուցաբերում։ Մերթ անցնում է հարձակման և արագ կերպով՝ սլաշտպանություն։ Դժվար է գլուխ դուրս հանելը։ Առաջ մեզ ասում էյին, թե դա ուժեղ բանակ չէ, բայց յերբ մենք ընդհարվեցինք ռազմաճակատում, ապա յես տեսնում եմ, վոր այդ մոլորություն էր։ Կարմիր զորքերը հաճախ կրկնում էյին կատաղի գրոհները։

Յերեկ պռավոյան յերրորդ վաշտում կար 137 մարդ, այսօր մնացել է 50, և այն արդեն վերածել են մեկ դասակի։

Հուլիսի 31-ի առավոտյան լուսադեմին մենք 1-ին վաշտով գրոհեցինք Սյացաոֆին բարձունքը։ Հակառակորդի 14 զինվոր 5 ժամվա ընթացքում համառորեն կասեցնում էյին մեր 1-ին վաշտի գրոհը, այնտեղում նրան մեծ պարտություններ, և հաջողվեց նրանց դուրս մղել ձեռնամարտից ու սվինամարտից հետո միայն»։

Յապոնական բանակի 75-րդ հետևակ զնդի 11-րդ վաշտի պորուչիկ Կոֆուենդոն իր հուշատետրի մեջ նշել է.

«Կարմիրները լավ են ոգտագործում հրաձիգ զենքի բոլոր տեսակները — թե՛ հրացանները, և թե՛ ձեռքի ու հաստոցավոր զնդացիները։ Մենք մեծ կորուստներ կրեցինք զիպուկ կրակից, յերբ հրացանային հրաձգությունը տեղի յեր ունենում նույնիսկ 900—1000 մետրի վրա։ Նորհրդային անայպերները լավ են ըողարկվում, հմտորեն ոգտագործում են տեղանքը։ Հալաքվում են 3—4-ական զինվոր և, անմիջապես խրամատավորվելով, գերզիպուկ կրակ են վարում մեր ամբողջ դասավորության դեմ, մեծ կորուստ են պատճառում։ Կան շատ սպանվածներ ու վիրավորներ»։

Յապոնական «Ասաի» լրագիրը, վորն ստիպված էր խոստովանելու յապոնական զորքերի լիակատար ջախջախումը Նախախում Գոլի մոտ, այդ առթիվ գրում էր.

«Մինչև հիմա ժողովուրդը չգիտեր, թե ինչ աստիճան սարքավորված են Նորհրդային Միության մոտորիզացիայի յենթարկված զորամասերը։ Այժմ կգտնվեն բազմաթիվ մարդիկ, վորոնք զարմացած են այդպիսի անակնկալությունից»։

Խորհրդային ժողովրդի թշնամիները, պատերազմի հրձիգները, դամարնիկների, տուխաչեվսկիների և այլ սրիկաների բանդան կազմում ելին Կարմիր Բանակի պարտության պլանները:

Խորհրդային ժողովուրդը բոլշևիկյան կուսակցության և իր սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարութեամբ ճգնեց ստորաքարշ սողուններին և բանակը մաքրեց դավաճաններից ու մատնիչներից: Կարմիր Բանակը դարձավ աշխարհում ամենահզոր բանակը, վորը հագեցված է ժամանակակից մարտական տեխնիկայով, վորն ունի բարձրորակ, լենինի-Ստալինի կուսակցության գործին նվիրված ռազմական կադրեր, վորն ընդունակ է ջախջախելու ամեն մի թշնամու, ո'վ ել թեկուզ նա լինի, վորտեղից ել թեկուզ նա գա:

## ԿՍՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԲԱՆԱԿ Ե

Կարմիր Բանակի ուժն ու հզորությունը մեր կարմիրբանակայինների, հրամանատարների և քաղաշխատողների անսահման հերոսության մեջ է: Կարմիր Բանակի հերոսները խորհրդային ժողովրդի, լենինի-Ստալինի կուսակցության հավատարիմ դավակներն են: Նրանք ժողովրդական մասսաների հետ կապված են յեղքայրական սիրո և բարեկամության անքակտելի կապերով: Ժողովուրդը սիրում է իր հերոսներին, վորովհետեւ գիտե, վոր նրանք ծառայում են ժողովրդի գործին և նրա համար չեն խնայել իրենց կյանքը: Կարմիր Բանակն անդարտելի յե, վորովհետեւ նա ժողովրդական հերոսների բանակ է, վորը գիտակցորեն և համերաշխորեն պայքարում է խորհրդային հայրենիքի համար, սոցիալիստական հայրենիքի համար:

Կարլ Մարքսի մեծ գլխակից ֆրիդրիխ Ենգելսը գեո 1845 թվին ասում եր.

«Հիշեցեք, թե ինչպիսի հրաշքներ գործեց հեղափոխական բանակների ենտուղիազմը 1792-ից մինչև 1799 թ., վորոնք պայքարում ելին միայն պատրանքի համար, կարծեցյալ հայրենիքի համար, և դուք կհասկանաք, թե ինչքան ուժեղ պետք է լինի այն բանակը, վորը պայքարում է վոչ թե պատրանքի համար, այլ ոեալ իրականության համար»<sup>1</sup>:

Մարքսիզմի հանճարեղ հիմնադիրները համարյա հարյուր տարի առաջ նախատեսել են կոմունիստական հասարակությունը պաշտպանող նոր ժողովրդական բանակի ստեղծման պատմական անհրաժեշտությունը:

«... Այդպիսի հասարակության անդամը պատերազմի գեոյում... պետք է պաշտպանի իրական հայրենիքը, իրական ոջախը... նա, հետևաբար, կպայքարի վոգեորութեամբ, կայտնութեամբ, քաջութեամբ, վորոնց հանդեպ կթոչեն—ցրել կգան,

<sup>1</sup> Маркс и Энгельс, 4. III, էջ 278:

ինչպես դարձան, ժամանակակից բանակի մեքենական վարժեցումները»<sup>1</sup>։

Այդպիսի բանակի դոյացումը Վ. Ի. Լենինը տեսավ արդեն ուսանական առաջին հեղափոխության ժամանակաշրջանում։ 1905 թվին «Միապետական բուրժուազիայի սոցիալիստական պրոլետարիատի ու գյուղացիության դուռն անցած» վերտառությամբ հոդվածի մեջ, գնելով գլխից անցած ապստամբության, հեղափոխական բանակ ստեղծելու և ժամանակավոր հեղափոխական կառավարության համար պայքարելու վերաբերյալ խնդիրները, Վլադիմիր Իլյիչը գրում էր․

«Ժողովրդական ուժերն այդ խնդիրները կենսագործելու համար տարերայնորեն աճում են վո՛չ թե որեցոր, այլ ժամ առ ժամ։ Ապստամբության փորձերը բազմապիսի են, նրա կազմակերպումն աճում է, գինումն առաջ է գնում։ Խալաթ, պիճակ ու մուսկետի հագած բանվորներն ու գյուղացիներն շարքերից առաջ են գալիս անհայտ հերոսներ, փորոնք անխղճիորեն ձուլված են ամբոխի հետ և փորոնք հետզհետե ավելի խորն են սողորմում ժողովրդական ազատագրման ազնիվ մոլեռանդությամբ։ Մեր դործն է՝ հոգալ, փորպեսզի այդ բոլոր առվակները միանալով մի ուժգին հեղեղ կազմեն, փորպեսզի մեր մերձավոր խնդիրների գիտակցական, փորձակի, պարզ ու ճշգրիտ հեղափոխական ծրագրի լույսը լուսավորի տարերային շարժումը, տասնապատկելով նրա ուժերը»<sup>2</sup>։

Մեր հերոսական Կարմիր Բանակն ուժեղ է հատկապես իր հեղափոխական գիտակցականությամբ, այդ «գիտակցական, փորձակի, պարզ ու ճշգրիտ հեղափոխական ծրագրի» լույսով։

Քաղաքացիական պատերազմի տարիներին մեր բանակը, լինելով կիսամերկ, կիսաքաղց և՛ վատ գինված, բայց ուժեղ՝ իր հեղափոխական վոգով և ժողովրդի անսահման աջակցությամբ, — ջախջախեց սպիտակգլարդիականների և խտերմենտների հրոսակախմբերը։

«Կարմիր Բանակը հաղթեց այն պատճառով, փորձ ա) կարմիր բանակայինները հասկանում էին պատերազմի նպատակներն ու խնդիրները և գիտակցում էին դրանց ճիշտ լինելը, բ) պատերազմի նպատակների և խնդիրների ճշտությունը գիտակցելը նրանց մեջ ամբապնդում էր դիսցիպլինայի վոգին և մարտունա-

կությունը․ գ) այդ պատճառով կարմիր բանակային մասսաները թշնամիների դեմ մղվող պայքարում շարունակ ցուցաբերում էին անորինակ անձնուրացություն և չտեսնված մասնայական հերոսություն»<sup>1</sup>։

Յերիտասարդ Խորհրդային հանրապետության բազմաթիվ թշնամիների դեմ մղած առասպելական մարտերում՝ սոցիալիզմի դործի և իրենց հայրենիքի ազատության համար իրենց կյանքը տվին քաղաքացիական պատերազմի փառապանծ հերոսներ Չապայեվը, Լադոն, Շչորսը, Պարխոմենկոն և ուրիշ անձանքը հերոսներ, փորոնք անունները հավիտյան կապրեն ժողովրդի արտերում։

Այդ բնածին հերոսները դուրս են յեկել ժողովրդական մասսաների խորքերից և ժողովրդից ժառանգել են հիանալի հատկություններ՝ անսահման նվիրվածություն մայր-հայրենիքին, քաջառիկ հերոսություն և արիություն, այրող ատելություն ժողովրդի թշնամիների նկատմամբ։

25-րդ դեկտեմբերի փառապանծ հրամանատար Չապայեվի անունը, փորն իր կյանքը տվեց իր ժողովրդի յերջանկության համար, դարերով կապրի։ Այդ անունը հարատևությամբ է լըցնում բոլոր աշխատավորների սրտերը։ Չապայեվի սերադործությունները սարսափ և չիթություն են յին առաջ բերում մեր հայրենիքի թշնամիների շարքերում։ Հայրենասիրությունը, անսահման հավատարմությունը Լենինի — Ստալինի կուսակցության հանդեպ, պարզությունը, արիությունը և հերոսությունը բնութագրում են ժողովրդական սիրելի հերոսի կերպարը։ Չապայեվի հերոսական վոգին ապրում է մեր քաջարի Կարմիր Բանակի մարտական գործերում։

Յե՛վ Սերգեյ Լադոն՝ Հեռավոր Արևելքի պարտիզանական շարժման խոշորագույն ղեկավարը, և՛ Շչորսը՝ «ուկրաինական Չապայեվը», ինչպես նրան անվանեց ընկեր Ստալինը, և՛ Պարխոմենկոն՝ ամենաքաջ դիվհրամը, փորի կյանքը, ընկեր Վորոշիլովի խոսքերով, «հիանալի հեքիաթ էր, պրոլետարական փողով մեծության սխմվող», — դրանք բոլորն իրենց հայրենիքի բուցալառ հայրենասերներն էին, նրա հավատարիմ զավակները։ Հարյուրավոր ու հազարավոր այդպիսի հերոսներ պայքարել և

<sup>1</sup> Маркс и Энгельс, 4. III, 42 278։

<sup>2</sup> Լենին, 4. VIII, 42 250։

<sup>1</sup> «Համկ(բ)ի պատմության համառոտ դասընթաց», էջ 330, Պետքաղհրատ, 1938 թ.։

սլաքարում են խորհրդային իշխանության համար և իրենց կրծքով հետ են մղում թշնամու հարվածները:

Գ. Ի. Կոտովսկին սքանչելի բոլշևիկ հրամանատար էր, վորն ուներ զարմանալի քաջություն:

«Յես ճանաչում եյի ընկ. Կոտովսկուն,—գրում էր ընկեր Ստալինը,—վորպես որինակելի կուսակցականի, փորձառու զին-վորական կազմակերպչի և հմուտ հրամանատարի: Յես առանձ-նապես նրան լավ հիշում եմ լեհական Ֆրոնտում 1920 թվին... Նա լեհերի սարսափն էր, վորովհետև նա կարողանում էր «փշրել» նրանց ինչպես վոչ վոք, ինչպես ասում եյին այն ժամանակ կարմիրբանակայինները:

Ամենաքաջը մեր համեստ հրամանատարների մեջ և ամենա-համեստը քաջերի մեջ—այսպիսին եմ յես հիշում ընկեր Կոտով-սկուն»:

Խառան լճի շրջանում յապոնական հախչողակիչները դեմ մղած մարտերում Կարմիր Բանակը հերոսության հրաշքներ յե-րևան բերեց: Կարմիր Բանակի մարտիկները, բոլշևիկյան կու-սակցության սաները, վորոնք իրենց ժողովրդի յերջանկության, իրենց հայրենիքի բարորության մտքերով համակված՝ հզոր հեղեղի պես շարժվեցին թշնամու վրա և ջախջախեցին նրան: Մոնղոլիայում, Խալխին-Գոլում մեր քաջարի մարտիկները ցույց տվին անձնվեր արիւթյան, չտեսնված հերոսության և սոցիա-լիստական հայրենիքին տածած անսահման նվիրվածության լա-վազուն որինակներ: Մեծ Ստալինի անունը չրթունքներին ան-վեհեր կերպով նրանք գրոհի եյին գնում և վոչնչացնում թշնա-մուն:

Հանուն իրենց սիրելի հայրենիքի, հանուն աշխատավոր ժո-ղովրդի բարորության մեր կարմիր մարտիկները 1939 թ. սեպ-տեմբերի 17-ին անցան նախկին Լեհաստանի սահմանը և, ջախ-ջախելով դիմադրող սպիտակլեհական բանակի զորամասերը, ազատագրեցին իրենց արյունակից յեղբայրներին—ուկրաինացի-ներին և բելոռուսներին լեհական կալվածատերերի և կապիտա-լիստների լծից:

Յեվ հիմա մեր կարմիր հերոսները, հաղթահարելով արտա-սովոր դժվարությունները Ֆինլանդիայի ձյունների մեջ և ան-տառներում, հաջողությամբ կռվում են Մաններհայմի զազազած բանդաների դեմ, պաշտպանելով Լենինի մեծ քաղաքի մատույց-ները և ողնելով Ֆինլանդիայի Դեմոկրատական Հանրապետու-

թյան ժողովրդական կառավարությանը՝ ազատագրվելու սպի-տակֆիննական ռազմամուկների կատաղի տեռորից:

Ի՞նչն է Կարմիր Բանակի հզորության ու արիւթյան խթանը:

Ընկեր Վորոշիլովը 1939 թ. նոյեմբերի 7-ին Կարմիր հրա-պարակում արտասանած իր ճառի մեջ հայտարարեց.

«Մարտիկների, հրամանատարների, պետերի, կոմիսարների և քաղաշխատողների նվիրվածությունը Լենինի—Ստալինի դուր-և ծին, իրենց Հայրենիքին և անսահման սերը դեպի իրենց մեծ Ստալինը յեղել են և հանդիսանում են Կարմիր Բանակի հզորու-թյան և արիւթյան խթանը, մի բանակ, վորը չի կարող պան-ծալի չլինել, վորը միշտ անխորտակելի կերպով հաղթական կլինի»:

Մեր հերոսները ժողովրդի հետ մեկ միս ու արյուն են: Նրանք հատուկենտ չեն—նրանք միլիոններ են: Նրանց զգաց-մունքներն ու ալյունը—դա ամբողջ խորհրդային ժողովրդի զգացմունքներն ու ալյունն է: Նրանց համարձակությունն ու անվեհերությունը—դա հատուկենտերի բաժինը չէ, դա միլիոն-ների անկապտելի հատկությունն է: Ամբողջ խորհրդային ժողո-վուրդը հերոսների ժողովուրդ է:

Կապիտալիստական աշխարհում, վորտեղ մարդկանց բոլոր արարքներն ու սխաղործությունները գնահատվում են միայն դրամով, չի կարող մասսայական հերոսություն լինել: Կապիտալիզ-մի յերկրներում յերևան յեկած հերոսները յեղել են կամ դի-տության նահատակներ, վորոնք անպայման կործանվել են թըշ-նամանքի ու շահույթի այդ աշխարհում, կամ հատուկենտ մարդիկ, վորոնք գործել են հանուն անձնական հարստացման:

Ընկեր Ստալինը 1938 թ. մարտի 17-ին Կրեմլում Պապանինի և պապանինականների հետ ունեցած հանդիպման ժամանակ, վորոնք հենց նոր եյին վերադարձել դրեյֆոդ «Հյուսիսային բե-վեռ» սառույցից,—չեց խորհրդային մարդկանց հերոսու-թյունը:

«Այդ յերեկո,—գրում է Խորհրդային Միության Հերոս Ի. Գ. Պապանինը իր «Անմոռանալի հանդիպումներ» հոդվածի մեջ,—Իոսիֆ Վիսսարիոնովիչը մի ճառ արտասանեց, վորն ընդ-միշտ պահպանվել է իմ հիշողության մեջ: Նա խոսեց խորհրդա-յին մարդկանց խիզախության մասին, հերոսության ակունքների մասին: Ինչո՞ւ այդպիսի մարդիկ չեն կարող լինել կապիտալիզ-

մի յերկրներում, Արևմուտքում և Արևելքում: Վորովհետև այն-  
տեղ ամեն մի մարդու և նրա հերոսությունը գնահատում են  
միայն վաստակի, շահույթի տեսակետից: Ամերիկացիները,  
անգլիացիները, ֆրանսացիները նույնիսկ սխրագործությունները  
գնահատում են դուլլարներով, ստերլինգներով, ֆրանկներով:  
Յե՛վ ընկեր Ստալինն առաջարկեց այն բանի կենացը, վոր մենք,  
խորհրդային մարդիկ, յուրացնենք մարդկանց գնահատման  
խորհրդային չափանիշը, վոր սովորենք մարդկանց գնահատել  
ըստ նրանց գործերի ու սխրագործությունների:

Այդպես եր ասում Ստալինը: Մեծ իմաստությունքս և խոր-  
հրդային մարդու նկատմամբ տածած սիրով եր տողորված այդ  
ճառը: Նա խոսում եր խորհրդային մարդկանց ապրելու և հայրե-  
նիքի համար պայքարելու իրավունքի մասին: Նա առաջարկեց այն  
մարդկանց կենացը, վորոնք ուզում են ապրել և պայքարել ի  
փառս հայրենիքի: Նա բարձրացրեց բաժակը, առաջարկելով բո-  
լոր հերոսների կենացը—ծերերի ու յերիտասարդների, նրանց  
կենացը, ովքեր չեն մոռանում առաջ գնալ, մեր տաղանդները  
կենացը, յերիտասարդության կենացը, վորովհետև յերիտա-  
սարդների մեջ և ուժը»<sup>1</sup>:

Կարմիր Բանակի հերոսները մեզ մոտ արժանավորապես  
հարգանք ու ընդհանուր սեր են վայելում: Յերկիրն իր լավա-  
զույն զավակներին պարգևատրում ե շքանշաններով և մեդալ-  
ներով:

Ամենից ավելի խիզախներին խորհրդային կառավարությունը  
չնորհում ե խորհրդային Միության Հերոսի բարձր կոչում:

Խորհրդային Միության Հերոսների ընտանիքը հաշվվում ե  
հիմա ավելի քան 200 մարդ:

Նրանց մեջ եր նաև Վալերի Չկալովը, մեր ժամանակի մեծ  
ողաչուն, վորը մահացավ 1938 թ. դեկտեմբերի 15-ին՝ նոր  
ինքնաթիռը փորձարկելու ժամանակ: Չկալովը հիանալի արիու-  
թյան և իր ժողովրդին հավատարիմ լինելու որինակ եր: Նա սի-  
րում եր իր ժողովրդին, իր կուսակցությանը, ընկեր Ստալինին  
և մինչև վերջին շունչը հավատարիմ եր իր հայրենիքին: Նա  
այրվում եր դեպի ժողովրդի թշնամիները տածած ատելությունքս  
և ամեն մի բոպե պատրաստ եր իր կյանքը զոհելու աշխատավոր-  
ների ազատության և յերջանկության համար:

Խորհրդային Միության Հերոս ընկ. Բալդուկովը, Վալերի  
Չկալովի մարտական զինակիցը և բարեկամը, մեծ ողաչուհի հի-  
շատակին նվիրված սգո միտինգում ասաց.

«Իր յեռուն ենեղբիան և կամքի ուժը նա քաղում եր ժողո-  
վրդի մասսաների խոր ընդերքից, վորի լավագույն գծերը նա  
մարմնավորեց իր մեջ: Ահա թե ինչու Վալերին հսկայական սեր  
եր վայելում խորհրդային ժողովրդի, ամբողջ յերկրի, բոլշևի-  
կյան կուսակցության և անձամբ ընկեր Ստալինի կողմից: Յե՛վ  
այդ սերը—այդ սերտ կապը ժողովրդի հետ՝ նրա մեջ ծնեցին  
անվահերություն, ուժ, ազնվություն և կամք»:

Չկալովը, աշխատավոր ժողովրդի զավակը, հպարտանում  
եր մասսաների հետ իր ունեցած կապով: «Наш трансполярный  
рейс» գրքի մեջ նա նկարագրել ե ամերիկացի մի միլիոնատիրոջ  
հետ «Нормандия» շոգենավի վրա ունեցած իր զրույցը.

«— Դուք հարուստ եք—հարցրեց նա:

— Այո, շատ հարուստ եմ,—պատասխանեց յես:

— Ինչո՞ւմ ե արտահայտվում ձեր հարստությունը:

— Յես ունեմ 170 միլիոն:

— 170 միլիոն!!! Ինչ՞ ուրբի՞, թե՞ դուլլար:

— Վո՛չ, 170 միլիոն մա՛րդ, վորոնք աշխատում են ինձ հա-  
մար, հենց այնպես, ինչպես յես աշխատում եմ նրանց հա-  
մար»<sup>1</sup>:

Մեր հերոսներն ուժեղ են նրանով, վոր նրանց թիկունքում  
կանգնած ե ամբողջ յերկիրը, ամբողջ ժողովուրդը և մարտե-  
րում կոփված բոլշևիկյան կուսակցությունը:

Խորհուրդների յերկրում Ստալինյան Սահմանադրության  
արեգակի տակ ամեն որ, ամեն ժամ ծնվում են նոր հերոսներ:

«Յերաշխատրում եմ, թշնամիները իրականում կհամոզվեն,  
վոր խորհրդային յերկրում Չկալովներ, Գրոմովներ, Բալդուկով-  
ներ և Յուժաչևիներ շատ ավելի կան, քան նրանք իրենց պատ-  
կերացնում են...»—ասում եր Վալերի Պավլովիչ Չկալովը, հան-  
դես գալով ընտրողների առաջ:

Կարմիր Բանակի հերոսական ողաչունները և՛ Մոնղոլիայում,  
և՛ Արևմտյան Ուկրաինայում, և՛ Արևմտյան Բելոռուսիայում, և՛  
Ֆինլանդիայում ցույց տվին, վոր Չկալովների թիվը մեր յեր-  
կրում անհամար ե: Չկալովյան արիությունը, քաջությունը և

<sup>1</sup> Сборник «Встречи с товарищем Сталиным», № 35—36, Госполитиздат, 1939 թ.:

<sup>1</sup> В. Чкалов, Наш трансполярный рейс, № 55, Госполитиздат, 1938 թ.:

խիզախութիւնը մարմնավորվեցին մեծ յերկրի անվեհեր բազե-  
յի, խորհրդային Միութեան կրկնակի Հերոս Գ. Պ. Կրավչենկոյի  
մեջ, խորհրդային ուրիշ հիանալի հարյուր-հազարավոր ողաչու-  
ների մեջ:

Մեր հերոսներին աճեցնում է բոլշևիկյան կուսակցութիւնը,  
ընկեր Ստալինը: Խորհրդային Միութեան Հերոս Մ. Մ. Գրոմո-  
վը գրում է.

«Մեզմ, հայրաբար, ընկեր Ստալինը մեր ողաչունների մեջ  
դաստիարակում է այնպիսի գծեր, վորոնք մարդու ամենալավ  
գարդն են հանդիսանում, այն է՝ անվեհերութիւն, անձնագո-  
հութիւն, համարձակութիւն և քաջութիւն: Սակայն ողաչու-  
ները հետ ունեցած իր զրույցներում Իոսիֆ Վլասարիոնովիչը  
շարունակ հիշեցնում էր այն մասին, վոր համարձակութիւնն  
ու քաջութիւնը հերոսութեան միայն մի կողմն է, իսկ մյուս,  
վոչ պակաս կարևոր կողմը հմտութիւնն է: Ողաչուն—դա հա-  
մակենտրոնացված կամք է, ուսկ անելու հմտութիւն:—Յեւ թե  
պետ համարձակութիւնը քաղաքներ է վերցնում,—նկատում է  
Ստալինը,—բայց միայն այն ժամանակ, յերբ համարձակութիւն-  
ը և ուսկ անելու պատրաստակամութիւնը զուգորդվում են գե-  
րազանց գիտելիքների հետ:

Մի առանձին ջերմութեամբ և սիրով է խոսում Իոսիֆ Վլա-  
սարիոնովիչը շարքային, միջին ողաչունների մասին: Յեւ հիշում  
եմ, Չկարովի, Բայդուկովի և Բելյակովի ընդունելութիւնը  
ընկեր Ստալինն իր առաջին բաժակն առաջարկեց մեր ավիացիա-  
յի հենարանի և հուշի՝ փոքր ու մեծ ողաչունների կենացը:

— Հայտնի է, ո՛վ է փոքր, ո՛վ է մեծ, — ավելացրեց Իոսիֆ  
Վլասարիոնովիչը:— Այդ իրականում կապացուցվի:

Յեւ ողաչուններն ասացուցեցին: Շարքային ողաչունները,  
վորոնց մասին այն ժամանակ խոսում էր Ստալինը, անթառամ  
փառքով պատկեցին իրենց մեր հայրենիքի թշնամիների դեմ  
մղած մարտերում, ժողովրդական հերոսների պատվաւոր կոչու-  
մը վաստակեցին»<sup>1</sup>:

Ֆիննական սպիտակգլարդիականութեան դեմ մղված կռիւի  
ճակատում հրամանատարութեան մարտական առաջադրանքներն  
որինակելի կերպով կատարելու և այդ միջոցին ցուցաբերած քա-  
ջութեան ու արիւթեան համար ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նա-

խագահութիւնը ԽՍՀՄ շքանշաններով ու մեդալներով պար-  
գեւատրեց խորհրդային ժողովրդի հազարավոր խիզախ զավա-  
կները—Կարմիր Բանակի մարտիկներին, հրամանատարներին և  
քաղաշխատողներին: Սոցիալիզմի յերկրի ամենից ավելի խիզախ  
ռազմիկներն արժանացան Խորհրդային Միութեան Հերոսի կոչ-  
մանը:

Հպարտութեան և հիացմունքի զգացմունք են առաջ բերում  
աշխատավորների սրտերում Լենինգրադի զինվորական ոկրուզի  
այն մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների հե-  
րոսական սխրագործութիւնները, վորոնք աչքի յեն ընկել սպի-  
տակաֆինների դեմ մղած մարտերում:

Խորհրդային ժողովուրդը սիրով և յերախտադիտութեամբ է  
արտասանում բարձր պարգևով պարգեւատրված քաջարի հերոս-  
ների անունները: Նրանց սխրագործութիւններն իսկապէս առաս-  
պելական են: Նրանք ստալինյան կոփվածքի հերոսներ են: Վո՛չ  
դաժան սառնամանիքները, վո՛չ բուքն ու բորանը, վո՛չ ել ֆին-  
նական սպիտակգլարդիականների գնդակները—վո՛չ մի բան  
նրանց չի կանգնեցնում հաղթանակի ճանապարհին: Կատարելով  
սոցիալիստական մեծ հայրենիքի կամքը, խստորեն պահպանելով  
Կարմիր Բանակի մարտիկի սրբազան յերգումը, չխնայելով իրենց  
արշունը, վոչ ել կյանքը, նրանք անվեհերորեն մարտի ելին  
գնում և մարտի յեն գնում թշնամու վրա ու խորտակում նրան:

Կարմիր Բանակի ամենից քաջ, ամենաքաջարի մարտիկների  
մեջ, վորոնք այսուհետեւ կրում են Խորհրդային Միութեան Հե-  
րոսի պատվաւոր կոչումը, կան նաեւ յերիտասարդ կարմիրբանա-  
կայիներ, վորոնք աճել ու դաստիարակվել են խորհրդային իշ-  
խանութեան որով, կան և ավագ հրամանատարներ՝ քաղաքա-  
ցիական պատերազմի մասնակիցներ:

Ահա 23-ամյա կոմյերիտական, ջոկի հրամանատար, հրե-  
տանավոր Գրիգորի Լապտեվը: Պաշարված լինելով սպիտակաֆին-  
ների կողմից և մենակ մնալով հրանոթի մոտ, նա չհերքաց և  
ուղղակի նշանառումով շարունակեց հարվածել թշնամու շարքե-  
րը: Գրիգորի Լապտեվը սպիտակֆիննական բանգալի վրա ար-  
ձակեց 19 արկ և ջախջախեց նրանց, պահպանելով իր հրանոթը:

Բացառիկ քաջ և հմուտ զինվորական պետ իրեն հանդես բե-  
րեց սպիտակաֆինների դեմ մղված մարտերում ավագ սերնդի  
մարտիկ, վաստակավոր հրամանատար—կարմրագրողային, բրիգ-  
հրամ Պ. Յե. Վեչչեվը: Վոչ մի բուք չընդհատելով իր ստորա-

<sup>1</sup> М. Громов, Великий учитель и друг, «Учительская газета», 19  
դեկտեմբերի 1939 թ.:

բաժանումներն մարտական դործողութիւնները ղեկավարելը, անվնաս երկրէն բերելու և ամենապատեհաբար տեղափոխելու, իր արիւթքով և խիզախութեամբ հրապուրելով մարտիկներին՝ գրոհելու թշնամու վրա:

Իրենց շարքերից հիւնալի հերոսներ առաջ քաշեցին զենքի բոլոր տեսակների մարտիկները: Բացառիկ հերոսութեան որինակ ցուցաբերեց հետեակի կապիտան Ն. Ս. Ուզրյովովը, խորտակելիզ գրոհների հիւնալի վարպետը, սպիտակաֆինները պատուհասը: Անմոռանալի սերագործողութիւն կատարեց տանկային դասակի հրամանատար՝ կրտսեր լեյտենանտ Նիկոլայ Կիչիգինը: Հակառակորդի կրակի տակ, արյունաքամ լինելով, նա բոցավառով տանկից դուրս բերեց իր վերավորված՝ ընկերներին և վեց ժամվա ընթացքում նոնակներով հետ եր մղում հակառակորդին: Հերոսարար մարտնչում եր թշնամու կործանիչները դեմ հրաձիգ-նաղիստ Վասիլի Բախալովը: Հետ մղելով թշնամու գրոհները, նա կրակեց մինչև վերջին փամփուշտը: Վոտքից վերավորվելով, Բախալովը բոցավառով ինքնաթիռից վայր ցատկեց վնասված պարաշյուտով: Իջնելով հակառակորդի թիկունքում, նա կարողացավ վերադառնալ իրենց զորքերի դասավորման տեղը: Հիւնալի խիզախութիւն հանդես բերեց կարմիրբանակային՝ սակրավոր Նիկոլայ Նիկիտինը, վորը ճանապարհ հարթեց մեր հետեակի և տանկերի համար: Թշնամու զնդակների տարախի տակ, արհամարհելով վտանգը, նա փակցրեց յեղ եր բաց անում:

Նույնպիսի արիւթքով և խիզախութեամբ հանդես բերին արյունաբերու Մաններհէյմի զազանացած բանդաների դեմ մղված կռիւում Խորհրդային Միութեան նաև մյուս Հերոսները: Նրանք նույնպես համարձակ և անվախ կերպով ջախջախում էին ֆիննական սպիտակգլխադիականութեանը, անդու-Ֆրանսական իմպերիալիզմի վարձու բանդիտներին: Նրանք իրականում արդարացրին Կարմիր Բանակի առաջնորդ՝ ընկեր Վորոշիլովի խոսքերը:

«Ստալինի անունը շրթունքներին՝ Լենինգրադի ոկրուգի գրամատերը մարտեր են մղում, պաշտպանելով Լենինգրադի մատույցները և ազատագրելով ֆիննական ժողովրդին նրան աւերակցնողներից:

Մեր գինված ուժերի լիակատար հաղթանակն ամեն մի թըշնամու դեմ մղվող պայքարում՝ ապահովված է, վորովհետև մեզ հետ ե Ստալինը, վորովհետև յուրաքանչյուր մարտիկ, հրա-

մանատար և քաղաշխատող լավ գիտե ստալինյան ամենորայ հոգատարութիւնն իր սոցիալիստական հայրենիքի և Կարմիր Բանակի մասին: Յուրաքանչյուր մարտիկ, հրամանատար և քաղաշխատող մտքերով ու հոգով միշտ Ստալինի հետ ե: Նրա կոչով յուրաքանչյուրը պատրաստ ե առանց տատանվելու տալու իր բոլոր ուժերը, յեթե հարկավոր ե, նաև իր կյանքը, հանուն հայրենիքի փառքի և հղորութեան, հանուն կոմունիզմի»<sup>1</sup>:

Բոլշևիկյան կուսակցութիւնը և ընկեր Ստալինը Կարմիր Բանակի մարտիկներին մեջ դաստիարակում են նոր, սոցիալիստական մարդու հատկութիւններ՝ նվիրվածութիւն և հավատարմութիւն իր սոցիալիստական հայրենիքին, արիւթքով, համարձակութիւն, խիզախութիւն, կարգապահութիւն, սկզբունքայնութիւն:

Կարմիր Բանակն իդեալես կռիւում ե իր մարտիկներին, ուսուցանում ե նրանց՝ լինել զգոն և աշխույժ, պատրաստ լինել մերկացնելու ԽՍՀՄ թշնամիների ամեն մի մեքենայութիւն:

Ուղիղ մի տարի սրանից առաջ, 1939 թ. փետրվարի 23-ին, Կարմիր Բանակը յերգում ամէց մեծ Ժողովրդին, հղոր Հայրենիքին, աշխարհում առաջին Բանվոր-Գյուղացիական Կառավարութեանը: Այդ որը հայրենիքին հավատարմութեան յերգում ամին մարտիկներն ու հրամանատարները, կոմիտարներն ու պետերը, բոլորը—մարշալից մինչև կարմիրբանակայինը: Պատմական այդ որը Հայրենիքին և Ժողովրդին զինվորական յերգում ամէց Գլխավոր Ռազմական Խորհրդի անդամ ընկեր Ստալինը: Այդ որը Հայրենիքին և Ժողովրդին յերգում ամէց բոլշևիկ զորավար, ԽՍՀՄ Պաշտպանութեան Ժողովրդական Կոմիտար՝ Խորհրդային Միութեան մարշալ ընկեր Վորոշիլովը:

Կարմիր Բանակի մարտիկի բարոյական բարձր կերպարանքի արտահայտութիւն ե հանդիսանում զինվորական յերգումը—սոցիալիզմի յերկրի մարտիկի սրբազան յերգումը: Զինվորական յերգման խոսքերով Կարմիր Բանակի մարտիկը հայտարարում ե.

«Յեւ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններ Միութեան քաղաքացի, մանելով Բանվոր-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերը, յերգում եմ ընդունում և հանդիսավոր կերպով յերգվում եմ լինել ազնիվ, խիզախ, կարգապահ,

<sup>1</sup> Ворошилов, Сталин и строительство Красной Армии, «Правда», 21 դեկտեմբերի 1939 թ.:

ղգաստ մարտիկ, խստորեն պահել ռազմական և պետական գաղտնիքը, անստորկելիորեն կատարել բոլոր զինվորական կանոնադրութիւնները և հրամանատարներին, կոմիսարներին ու պետերին հրամանները:

Յեւ յերգում եմ բարեխղճորեն ուսումնասիրել զինվորական գործը, ամեն կերպ պահպանել զինվորական ու ժողովրդական գույքը և մինչև վերջին շունչս նվիրված լինել իմ ժողովրդին, իմ խորհրդային Հայրենիքին և Բանվորա-Գյուղացիական Կառավարութեանը:

Յեւ միշտ պատրաստ եմ Բանվորա-Գյուղացիական Կառավարութեան հրամանով դուրս գալ պաշտպանելու իմ Հայրենիքը— խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններին Միութիւնը և, վորպէս Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի մարտիկ, յես յերգում եմ պաշտպանել այն արեւարար, հմտորեն, արժանապատիւութեամբ ու պատվով, չինայելով իմ արյունը և կյանքն իսկ՝ թշնամիների նկատմամբ լիակատար հաղթութեան հասնելու համար:

Իսկ յեթե չար դիտավորութեամբ յես խախտեմ իմ այս հանդիսավոր յերգումը, ապա թող յես արժանանամ խորհրդային որենքի անողոք պատժին, ընդհանուր ատելութեան և աշխատավորների արհամարհանքին»:

Սոցիալիստական հայրենիքի թշնամիների դեմ ուղղված մարտերում, վոր Կարմիր Բանակը մղեց այս տարվա ընթացքում, շարքային և հրամանատարական կազմը, չտեսնված հերոսութիւն հանդես բերելով, իրականում ցույց տվեց խորհուրդներին յերկրի մարտիկի այդ մեծ յերդման անխախտելիութիւնը:

Հանուն հայրենիքի, հանուն Ստալինի մեր հերոսները հաղթել են և այսուհետեւ ել միշտ կհաղթեն սոցիալիզմի յերկրի—ամբողջ աշխատավոր մարդկութեան հայրենիքի բոլոր թշնամիներին:

## ՄՇՏԱՊԵՍ ԼԻՆԵԼ ՄՈՒԼԻԶԱՑԻՈՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ

Կարմիր Բանակի ուժն ու հզորութիւնը բոլշևիկների կուսակցութեան և խորհրդային կառավարութեան լենինյան-ստալինյան ճիշտ քաղաքականութեան մեջ է: Խորհրդային Միութիւնը աշխարհում միակ յերկիրն է, վորն անփոփոխ և հետեւողական կերպով խաղաղութեան քաղաքականութիւն է վարում:

Դրա հետ մեկտեղ խորհրդային ժողովրդի բանակը արթուն պահակ է կանգնած հեղափոխութեան նվաճումներին: Լենինը մեզ ավանդել է պահպանել ու ամրապնդել մեր յերկրի պաշտպանունակութիւնը:

«... Ձեռք վարկելով մեր խաղաղ շինարարութեանը՝ մենք բոլոր ուժերը գործ կդնենք այն առանց ընդհատումների շարունակելու համար: Միևնույն ժամանակ, ընկերներ՝, պատրաստ և զգուշ յեղե՛ք, պահպանեցե՛ք մեր յերկրի և Կարմիր Բանակի մարտունակութիւնը, ինչպէս ձեր աչքի լույսը...»<sup>1</sup>:

Խորհրդային Միութիւնը չըճապատված է կապիտալիստական յերկրներով: Այն պահից սկսած, յերբ աշխարհում գոյութիւն ունի առաջին պրոլետարական պետութիւնը, իմպերիալիզմի գիշատիչները մի շարք անգամներ փորձել են և փորձում են հարձակվել խորհուրդների յերկրի վրա և վոչնչացնել սոցիալիստական պետութիւնը:

«Մենք ապրում ենք վոչ միայն պետութեան մեջ, այլև պետութեամբների սխտեմի մեջ,—մատնանում եր Լենինը,— և խորհրդային հանրապետութեան յերկարատեւ գոյութիւնն իմպերիալիստական պետութիւնների կողքին անբեկաւայելի յէ: Վերջիվերջո կա՛մ մեկը, կա՛մ մյուսը կհաղթի: Իսկ մինչև վոր այդ վերջը վրա հասնի, խորհրդային հանրապետութեան ու

<sup>1</sup> Լենին, հ. XXVII, էջ 154—155:

բուրժուական պետութիւններն միջև մի շարք ամենասարսափելի ընդհարումներ անխուսափելի յեն»<sup>1</sup>։

Ընկեր Ստալինը 1937 թ. մարտին ՀամԿ(բ)Կ Կենտրոնի պլենումում «Կուսակցական աշխատանքի թերութիւններն և տրոցկիստական ու այլ յերկրներումն լիկվիդացիայի յենթարկելու միջոցառումների մասին» արած զեկուցման մեջ ասում եր․

«Կապիտալիստական շրջապատումը—այդ դատարկ Ֆրադ չէ, այդ շատ ունի և անսխորժ մի յերեւոյթ ե։ Կապիտալիստական շրջապատումը—այդ նշանակում է, վոր կա մի յերկր՝ Խորհրդային Միութիւնը, վորն իր մոտ սոցիալիստական կարգեր և հաստատել և, բացի դրանից, կան շատ յերկրներ—բուրժուական յերկրներ, վորոնք շարունակում են կապիտալիստական կենսաձևը և վորոնք շրջապատում են Խորհրդային Միութիւնը, առիթի սպասելով, վորպեսզի հարձակւեն նրա վրա, ջախջախեն նրան կամ, համենայն դեպս, խարխլեն նրա հզօրութիւնը և թուլացնեն նրան»։

Հիմա մենք ասլում ենք միջազգային լարւած իրադրութիւն մեջ։ Իմպերիալիստական գիշատիչները բորբոքում են համաշխարհային նոր պատերազմի բոցը։ Արեւմտյան Յեւրոպայում անգլիական և Ֆրանսական կապիտալիստները պատերազմ սկսեցին Գերմանիայի դեմ։ Հիմա ամբողջ աշխարհին հայտնի յէ այդ պատերազմի իմպերիալիստական բնույթը, պատերազմ, վոր մղում են համաշխարհային տիրապետութիւն համար։ Գերմանիայի ուժեղացմանը և գաղութային տիրութիւնների նկատմամբ գերմանական պահանջների հանդեպ ունեցած վախը—ահա թէ ինչն առաջ բերեց Անգլիայի և Ֆրանսիայի պատերազմը Գերմանիայի դեմ։ Յապոնիայի իմպերիալիստները շարունակում են ագրեսիան Չինաստանում։ Արդեն 1300 միլիոնից ավելի բնակչութիւն գաղութների հետ միասին ներգրավւած են յերկրորդ իմպերիալիստական պատերազմի որբիտայի մեջ։

Խորհրդային Միութիւնը հետեւողականորեն վարում է խաղաղութիւն քաղաքականութիւն։ Մի շարք տարիներ ընթացքում Խորհրդային Միութիւնը և Գերմանիայի միջև գոյութիւն ունեցին անսրմալ հարաբերութիւններ։ Անգլո-Ֆրանսական իմպերիալիստները ջանում էին թշնամութիւն հրահրել գերմանական և Խորհրդային ժողովուրդների միջև, վործում էին ճակատ առ ճակատ կովեցնել յերկու մեծ յերկրները, վորպեսզի հետո շահւեն նրանց հաշվին։

Խորհրդային կառավարութիւնը մերկացրեց պատերազմի արեւմտ-յեւրոպական հրձիգների մեքենայութիւնները։ 1939 թ. ոգոստոսի 23-ին ստորագրւեց Խորհրդային-գերմանական միմյանց վրա չհարձակւելու պայմանագիրը։ Դրանով վերջ տրւեց Յեւրոպայի յերկու ամենամեծ պետութիւնների միջև յեղած թշնամանքին և վերացւեց պատերազմի վտանգը նրանց միջև։ ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև այդ նոր լավ հարաբերութիւնների հետագա բարելաւումն իր արտահայտութիւնը գտավ Խորհրդային-գերմանական բարեկամութիւն և ԽՍՀՄ-ի ու Գերմանիայի սահմանների վերաբերյալ պայմանագրի մեջ, վորն ստորագրւեց 1939 թ. սեպտեմբերի 28-ին Մոսկովայում։

ԽՍՀՄ-ի խաղաղութիւն քաղաքականութիւն խոշոր հաղթանակը հանդիսացավ նաեւ ԽՍՀՄ-ի ու Եստոնական հանրապետութիւն միջև փոխադարձ ոգնութիւն պակտ կնքելը, ԽՍՀՄ-ի և Լատվիական հանրապետութիւն միջև կնքւած փոխադարձ ոգնութիւն պակտը, Վիլնո քաղաքը և Վիլնոյի մարզը Լիտվական հանրապետութիւնը հանձնելու վերաբերյալ և Խորհրդային Միութիւնը ու Լիտվայի միջև կնքւած փոխադարձ ոգնութիւն վերաբերյալ պայմանագրերը։ Այդ փաստաթղթերն ամենաարժեքաւոր մեծանք են խաղաղութիւն գործի մեջ։

Խորհրդային Միութիւնն իր արտաքին քաղաքականութիւն մեջ անփոփոխ կերպով պահպանում է ընկեր Ստալինի իմաստուն ցուցումները․

«1. Այսուհետեւ ել վարել խաղաղութիւն և բոլոր յերկրների հետ գործարար կապեր ամրապնդելու քաղաքականութիւն։

2. Զգուշութիւն պահպանել և թույլ չտալ, վոր պատերազմի պրովոկատորները, վորոնք սովոր են ուրիշի ձեռքբերով կրակից շագանակներ հանել, մեր յերկիրը քաշեն կոնֆլիկտների մեջ։

3. Ամեն կերպ ամրապնդել մեր Կարմիր Բանակի և Ռազմա-Մովային Կարմիր Նավատորմի մարտական հզօրութիւնը։

4. Ամրացնել բարեկամութիւն միջազգային կապերը բոլոր յերկրների աշխատավորների հետ, վորոնք շահագրգռւած են խաղաղութիւն և բարեկամութիւն պահպանելու ժողովուրդների միջև»<sup>1</sup>։

Խորհրդային Միութիւնը վերածւեց սոցիալիզմի անառիկ ամրոցի։ Սոցիալիզմի յերկրի բանակն անպարտելի յէ։

<sup>1</sup> Ստալին, Հաշվետու զեկուցում կուսակցութիւն XVIII համադումարում ՀամԿ(բ)Կ ԿԿ աշխատանքի մասին, էջ 20—21, Պետքաղհրատ, 1939 թ.։

<sup>1</sup> Լենին, Կ. XXIV, էջ 122։

Կապիտալիստական յերկրներն աշխատավորները հուսով, սիրով և հիացմունքով են նայում փառապանծ Կարմիր Բանակին: Նրանք խորհրդային ժողովրդի հետ միասին ուրախանում են նրա ամեն մի նոր հաղթանակով, նրա ամեն մի նոր նվաճումով: Նրանք գիտեն, վոր Կարմիր Բանակը—դա ազատագրող բանակ է:

Պատմությունը գիտե արդարացի պատերազմներ և վոչարդարացի պատերազմներ: Բոլոր արդարացի պատերազմներից, վորպիսին գիտե պատմությունը, Կարմիր Բանակը վարել է, վարում է և կվարի ամենից արդարացի պատերազմներ:

Արդարացի պատերազմները—դրանք այն պատերազմներն են, վորոնց նպատակն է՝ կամ պաշտպանել ժողովրդին արտաքին հարձակումներից և նրան ստրկացնելու փորձերից, կամ ազատագրել ժողովրդին կապիտալիզմի ստրկությունից, կամ, վերջապես, ազատագրել զաղութներն ու կախյալ յերկրները իմպերիալիստների կեղեքումից: Այդ պատերազմները պրոգրեսիվ են, վորովհետև դրանք մարդկությանը մեծագույն ոգուտ են բերել և բերում են, վոչնչացնելով հին, արդեն իր դարն ապրած կարգերը, տապալելով բռնակալներին և շահագործողներին և ազատագրելով ճնշման տակ գտնված ժողովուրդներին:

Սոսկիպի խորհրդի հանդիսավոր պլենումում, վոր նվիրված էր Կարմիր Բանակի տասնամյա տարեդարձին, իր արտասանած ճառի մեջ ընկեր Ստալինը մատնանշում էր, վոր մեր բանակը պատիարակվում է ինտերնացիոնալիզմի վոգով, բոլոր յերկրների բանվորների շահերի միասնության վոգով:

«... Նա, մեր բանակը, հանդիսանում է համաշխարհային հեղափոխության բանակ, բոլոր յերկրների բանվորների բանակ: Յե՛վ այն բանը, վոր այս հանդամանքն է հանդիսանում մեր բանակի ուժի ու հզորության սղբյուր, այդ բանը յերկրից կիմանան բոլոր յերկրների բուրժուաները, յեթե նրանք սիրտ կանեն հարձակվելու մեր յերկրի վրա, վորովհետև նրանք այն ժամանակ կտանեն, վոր ինտերնացիոնալիզմի վոգով զատարակված մեր Կարմիր Բանակը անթիվ քանակությամբ բարեկամներ ու դաշնակիցներ ունի աշխարհի բոլոր մասերում, Շահահայից մինչև Նյու-Յորկ, Լոնդոնից մինչև Կալկաթա»<sup>1</sup>:

Կարմիր Բանակի ազատագրական արշավանքը Արևմտյան

<sup>1</sup> Ստալին, Կարմիր Բանակի յերեք առանձնահատկությունների մասին, էջ 10—11. Պետքադհրատ, 1939 թ.:

Ուկրաինա և Արևմտյան Բելոռուսիա՝ հաստատեց, վոր մեր բանակն իսկապես միլիոնավոր բարեկամներ ունի կապիտալիստական յերկրներում:

Յերբ սնանկացած լեհական կառավարությունը բախտի քմահաճույքին թողեց իր ժողովրդին և Լեհաստանը դարձավ հարմար վայր ամեն մի պատահականության և անսպասելիության, վորոնք կարող էյին սպառնալիք ստեղծել ԽՍՀՄ-ի համար, խորհրդային կառավարությունը 1939 թ. սեպտեմբերի 17-ին հրաման տվեց Կարմիր Բանակին անցնել սահմանը, ոգության ձեռք մեկնել իր արյունակից յեղբայրներին—ուկրաինացիներին և բելոռուսներին:

Հենց նույն այդ ուրը պանական Լեհաստանի զորքերի վրա յերևացին խորհրդային ինքնաթիռներ: Նրանք միլիոնավոր թուռյկներ ցած նետեցին, վորոնց մեջ ասված էր.

«Մենք նվաճողներ չենք, այլ ազատագրողներ ենք: Մենք զալիս ենք ոգնություն ցույց տալու ուկրաինացի և բելոռուս յեղբայրներին՝ պանական կեղեքումից ազատագրվելու համար մղած նրանց արդարացի պայքարում: Զինվորներ, մի՛ դիմադրեք Կարմիր Բանակին: Նա ձեզ ազատագրություն է բերում իրավադուրի, քաղցած կյանքից, պանական ճնշումից և կամայականությունից, նա ձեզ բերում է նոր, յերջանիկ, բերկրալի կյանք»:

Նախկին Լեհաստանի աշխատավորները հակայական հրձիւնքով և ընդհանուր ցնծությամբ դիմավորեցին կարմիր զորքերին: Լեհական բանակի զինվորները դեցում էյին զենքերը և ցրվում տները: Մեր մարտիկների ճանապարհն Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի դյուղերում ու քաղաքներում բառացիորեն ծածկվել էր ծաղիկներով:

Նախկին Լեհաստանի բանվորներն ու դյուղացիները ակտիվ կերպով ոգնում էյին մեր մարտիկներին՝ լիկվիդացիայի յանթարկելու լեհական սպայության զազաղած շայկաները:

Կարմիր Բանակին անցավ սահմանը վոչ վորպես նվաճող բանակ, այլ վորպես ազատագրող բանակ:

Խորհրդային բանաստեղծ Ն. Ասեյևը արտահայտեց մեր

կարմիր մարտիկների մտքերը, հայտարարելով Արևմտյան Ռւկ-  
րախնայի և Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորներին՝

Мы переходим  
черту границ —  
Не с тем,  
чтобы нас боялись,  
Не с тем,  
чтоб перед нами  
падали ниц,—  
А чтоб —  
во весь рост выпрямлялись.<sup>1</sup>

Լեհական կալվածատերերի և կապիտալիստների ճնշումից  
ազատագրելով իր ուկրաինացի և բելոռուս յեղրայրներին,  
Կարմիր Բանակն ողնեց ազատագրված բնակչությանը կարգավորել  
նոր կյանքը: Կարմիր Բանակի ողնությամբ գյուղացիական կո-  
միտեները բաժանում էին կալվածատիրական հողերը բաժարակ-  
ների ու ամենաչքավոր գյուղացիների միջև, բանվորներն իրենց  
ձեռքն էին վերցնում նախկին տերերի թողած ձեռնար-  
կությունների կառավարումը: Այնտեղ, վորտեղ յերևում էին  
մեր կարմիր մարտիկները, բացվում էին գյուղացիներ և ահումբ-  
ներ, տարածվում էին գրքեր և լրագրեր, յերգում էին խոր-  
հրդային յերգեր: Կարմիր Բանակի մարտիկների գործունեյու-  
թյան մասին ամենից լավ պատմում են իրենք՝ ազատագրված  
ուկրաինական ու բելոռուս բանվորներն ու գյուղացիները: Խոր-  
հրդային գրող Պ. Պավլենկոն գրել յե առել հետևյալ պատմու-  
թյունը, վոր նրան պատմել են 1939 թ. նոյեմբերի 7-ին ուկրաի-  
նացի լեռնականները՝ հուլիսները.

«Լեհական սպաները հազարներով փախչում էին Հունգա-  
րիա: Ավտոմոբիլները, կառքերը, մոտոցիկլետները թափված

<sup>1</sup> Սահմանը

մենք անցնում ենք  
վո՛չ թե նրա համար,  
վոր մեզնից սարսափեն,  
վո՛չ թե նրա համար,  
վորպեսզի մեր առաջ  
յերեսն ի վար տափեն,  
Այլ վորպե՛սզի  
չտկվեն հասակով մեկ:

էյին ճանապարհներին: Տանում էին դաշնամուրները, հրանոթ-  
ները, պատեֆոնները, շաքարը, ալյուրը, ճարպը: Տանում էին  
բաղրանտարկյալներին: Հրկիզում և կողոպտում էին սահմանա-  
մերձ ուկրաինական գյուղերը: Կարմիր Բանակը, հասնելով  
փախչողներին, վերջին հարվածով ուկրաինական հողից դեն եր  
չպրտում վաչ-ուզմիկներին: Այն գյուղակը, վորտեղ յես այն  
ժամանակ գտնվում էին, ռազմական դեպքերից դուրս եր մնա-  
ցել, նրա յերիտասարդութունը գնացել եր ժողովրդական  
գվարդիայի ջոկատները, իսկ ծերունիները մնացել էին տանը:  
Յեմ ահա մի անգամ գիշերը, վերջին կռիվների որերին, գյու-  
ղակը յեկավ վերավորված մի կարմիրբանակային: Նա մոլոր-  
վել եր անտառի ճանապարհներին և ուզում եր սպասել մինչև  
առավոտ, վորպեսզի դեար իր զորամասը: Նրա վերքն անմիջա-  
պես կապեցին, կերակրեցին և նրա համար գիշերելու տեղ սար-  
քեցին ամենից ունեւոր և ընդարձակ մի տան մեջ: Դռան մոտ  
ուզում էին կարգել իրենց սահակը, բայց հյուրը վճռականա-  
պես հակառակեց դրան: Անկողնում պռկելու փոխարեն նա  
ժողով հրավերեց: Ժողովուրդն անմիջապես հավաքվեց:

— Լեհերը փախչում են սահմանից այն կողմը, իրենց հետ  
տանում են ժողովրդական բարիքը: Պարեկներ ուղարկեցե՛ք ճա-  
նապարհի վրա, հետ խլե՛ք գուլքը:

Հուլիսները քաջ, պատերազմող ժողովուրդ են: Հրամանը  
նրանց յերկու անգամ չպետք ե կրկնել: Հին վորսորդներից չորս  
հոգի անմիջապես թողին ժողովը:

— Կալվածատիրական հողը վերցրե՞լ եք: Դաստակերտներ  
վրա պահպանություն նշանակե՞լ եք: Պանական անասուններին  
հսկո՞ւմ եք: Փոստը ձեր ձեռքո՞ւմն ե:

Մարդիկ մեկը մյուսի հետևից դուրս էին գալիս ժողովից:  
Մնացին կանաչ ու անչափահասները:

— Նստեցե՛ք, կարմիր դրոշակներ կարեցե՛ք, — սասց նրանց  
վերավորվածը, — և պրակատներ գրեցե՛ք: Վաղը բոլոր խրճիթ-  
ներում առավոտվանից կարմիր դրոշակներ, պրակատներ և լո-  
ղունդներ կկախենք: Պանական դաստակերտի հատակը լվանա՛լ,  
պարելու յենք: Իսկ նախախումբ կա՞: Դե՛, յերգեցիկ խումբ  
կկազմենք: Ով յերգում ե, թող մոտենա ինձ: Իսկ դուք ձայ-  
նակցեք ըստ հնարավորության... «Յե՛լի՛ր, ում կյանքը անի-  
ծել ե...»:

Արդեն արշալույսը բացվում եր, յերբ մարդիկ ժողովից

ցրվեցին: Կեսերին մօտ՝ գյուղը տոնականորեն զարդարվեց: Կարմիր գրոշակներ, դուժաշե կտորներ լիքա գրված պրակատներ, լոգունգներ՝ տների պատերի վրա... յերեսաների յերգեցիկ խումբը կանգնած էր գյուղի մոտերքում, և, յերբ յերեսացին ժողովրդա-գլխադիրականները, հնչեց ուրախ, թեկուզ և վոչ ճիշտ «Խնտերնացիոնալը»: Լալիս էին մայրերը, լալիս էին ծերերը:

— Դե՛, դեպի գո՛րծ, դեպի գո՛րծ, —ասում էին նրանք, — դեպի դատասկե՛րտ, պանի մօտ: Անասունները դո՛ւրս բերեք... Հացի շտեմարաններին մօտ ժամապահներ նշանակեցեք...

Բաց նախքան ցրվելը գյուղացիները վճռեցին վողջունել Կարմիր Բանակի ներկայացուցչին և ամբողջ գյուղով մոտեցան այն տանը, վորտեղ նա գիշերել էր:

— Իսկ նա արդեն վաղուց գնացել է, —ասաց տանտիրուհին. — Շտապում էր յուրայինների մօտ: Ահա մի կապոց շաքար և թուղի մեր յերեսաներին:

Այն ժամանակ ծերունիներն ասացին յերեսաներին.

— Լավ մարդ էր յեկել մեզ մօտ: Յերգեցե՛ք, յերեսաներ, փառք նրան, և՛ ամբողջ Կարմիր Բանակին, և՛ Ստալինին, և Վորոշիլովին: Իբրև իրենց սրտի հատորը, նրանք մեզ էլին ուղարկել նրան:

Յեվ մարդիկ յերգեցին «Խնտերնացիոնալ», և՛ յերգում, և՛ մտածում էին կտրված ձևքով մարդու մասին, վորն յեկավ, նրանց վտաքի հանեց և գնաց, նույնիսկ չկարողանալով ստել իր անունը<sup>1</sup>:

Այսպիսին և Կարմիր Բանակի—ազատագրող բանակի մարտիկի հիանալի կերպարանքը:

Ներկայումս Կարմիր Բանակն իրականացնում է ազատագրական հերոսական արշավանքը Ֆինլանդիայում: Այդ արշավանքի նպատակն է՝ լիկվիդացիայի յենթարկել պատերազմի ամենավտանգավոր ոջախը, վոր ստեղծվել է Ֆինլանդիայում, Ֆիննական կապիտալիստների և կալվածատերերի հանցադործ կառավարության կողմից, ապահովել Խորհրդային Միության և առանձնապես յերեք ու կես միլիոն բնակչություն ունեցող Լենինգրադի անվտանգությունը և ոգնել Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետությանը՝ իր ուսերից դեն չպրտելու պատերազմի սպիտակֆիննական պրոլետարիատների ատելի բանդան:

<sup>1</sup> «Большевик» № 22, էջ 54—65, 1939 թ.:

«Այդ նպատակը, —ասում է Ֆինլանդիայի Ժողովրդական կառավարութայն դեկլարացիան, —լիովին համապատասխանում է մեր ժողովրդի կենսական շահերին: Ուստի և Ֆինլանդիայի ժողովրդական մասսաները հսկայական ենտուզիայով են դիմա-մորում և փողջունում Բալթի, անպարտելի Կարմիր Բանակին, գիտնալով, վոր նա Ֆինլանդիա յե գալիս վոչ վորպես նվաճող, այլ վորպես մեր ժողովրդի բարեկամ և ազատարար»:

Այլևլի քան քսան տարի Ֆինն ժողովուրդը տնքացել է սպիտակգլխադիրական ռազմածոյների ճնշման տակ: Ֆինլանդիայի սնանկացած կառավարողները ժողովրդից խլել են ազատությունը, աշխատավորներին ստրկութայն են տվել կալվածատերերին և կապիտալիստներին, նրանց ճգմել են ուժից վեր հարկերով: Հիմա Կարմիր Բանակը Ֆինլանդիայի ժողովրդին ազատագրություն է բերում կապիտալիստական շահադործումից և ստրկական հարկերից, նրան ատելի Ֆիննական ռազմածոյների տեղուրից: Ահա թե ինչո՛ւ Ֆինլանդիայի ազատագրված քաղաքների և գյուղերի աշխատավորները հսկայական ուրախությամբ են դիմավորում կարմիր զորքերին:

Լաուստելա գյուղի գյուղացիները՝ Ֆինլանդիայի Ժողովրդական կառավարութայն կազմվելու և Խորհրդային Միության ու Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութայն միջև փոխադարձ ոգնութայն և բարեկամութայն պայմանադիր կնքելու առթիվ քնդունած վորոշման մեջ հայտարարել են.

«Դիմավորելով Կարմիր Բանակի զորամասերին, վորը մեր ժողովրդին և մեր կառավարութայնը ոգնություն է ցույց տալիս Ֆիննական տեակցիոն ռազմածոյների արյունոտ տիրապետութայն գեմ մղվող պայքարում, մենք համոզվեցինք, վոք Կարմիր Բանակը մեզ մօտ է դալիս վոչ վորպես նվաճող, այլ վորպես կալվածատերերի և կապիտալիստների ճնշումից Ֆինն ժողովրդին ազատագրող»:

Մենք կոչ ենք անում Ֆինլանդիայի աշխատավոր ժողովրդին՝ ամեն կերպ սգնություն ցույց տալ Կարմիր Բանակին և Ֆինլանդիայի Ժողովրդական բանակի Սոալին Ֆիննական կորպուսին՝ Ֆինլանդիայի ազատագրվող ժողովրդի դահիճների դեմ նրանց կողմից մղվող հերոսական կռիվում»:

Սպիտակգլխադիրական ռազմածոյները Ֆինլանդիայի աշխատավորներին պատմում էին ամեն տեսակ մտացածին բան մեր մարտիկների մասին, նրանց նկարագրելով վորպես արյունարբու

գաղանները, վորոնք անխղճորեն բնաջնջում են անպաշտպան կանանց և յերեսաներին: Ազատագրված Ֆիննական բնակչությունը այժմ իրականում համոզվեց, թե ինչպիսի ստոր սուտ և զբոսաբերական էյին տարածում սպիտակգլարդիականները: Իրականում դուրս յեկավ, վոր Կարմիր Բանակի մարտիկներն ուսումը են հիանալի հատկություններով՝ բարձր գիտակցականություն, մարդասիրություն, կուլտուրականություն: Այն՝ թե ինչ են պատմում գինեթղթակիցներ Պ. Նեստերովը և Ս. Սոլոգոբովիկովը Ֆինն գեղջիկուհու՝ մեր բանակի մի մարտիկի հետ ունեցած հիանալի հանդիպման մասին:

«Ֆինն գեղջիկուհին անցնում եր անտառով: Հազած լինելով աղամարդու հնամաշ պիջակ, նա իր հետևից քաշում եր ձեռնասահակներ, վորոնց վրա դրված էյին կաթով լի փայտամաններ և մթերքների մի փոքրիկ կապոց: Նրան ճանապարհին հանդիպեց զինված կարմիրբանակային Նիկանորովը: Պառավը վախեցավ, չգիտեր, թե ուր փախչի: Շուտով իրականները տարիներ շարունակ բնակչությանը ներշնչել են, թե չի կարելի յերևալ «մոսկալի» աչքին՝ կշարժարեն-կսպանեն:

Բայց, ի մեծ դարմանս գեղջիկուհու, «մոսկալը» ամենևին եր սարսափելի դուրս չեկավ: Նա հանդիստ մոտեցավ նրան, նույնիսկ ուսից վար չիջեցնելով հրացանը:

— Բարե ոք, մորաքո՛ւյր, — սիրալիք ասաց կարմիրբանակայինը և ժպտաց:

Կինը չհասկացավ նրա խոսքերը, բայց ձայնի մեջ զգաց շատ սիրալիրություն և վոչ մի սպառնալիք:

Զրուցակիցներին դժվար եր միմյանց հասկանալ — նրանք խոսում էյին տարբեր լեզուներով: Ստիպված էյին ժեստերի և միմիկայի ոգնություններ բացատրել: Նիկանորովը հասկացավ, վոր կինը տուն ե գնում, հոգնել ե, և նրան առաջարկեց իր ոգնությունը՝ բլրի վրա բարձրանալու համար: Նա նրա ձեռքերից պարանը վերցրեց և ձեռնասահակները վեր քաշեց: Այնտեղ նա սեղմեց գեղջիկուհու ձեռքը և շարունակեց ճանապարհը:

Յերկար նայեց նրա հետևից գեղջիկուհին: Նրան աչքեցրել եր, վոր գլխարկի վրա կարմիր աստղ ունեցող այդ զինված մարդը՝ վոչ միայն իրեն չանպատվեց, այլ նույնիսկ ոգնեց:

Տուն չմտնելով, կինը փնտռեց Նճ գործարարի շտաբը:

— Ո՞ւմ եք ուզում — հարցրեց ժամապահը:

Կնոջ պատասխանից ժամապահը հասկացավ միքանի անգամ կրկնվող «կապիտան» բառը միայն: Նա կանչեց հերթապահին, և

կնոջը թույլ տվին մտնել շտաբ: Յե՛վ արդեն կինը նստած եր սեղանի շուրջը՝ հրամանատարի հետ միասին: Կողքին ել՝ թարգմանիչը:

— Իմ անունն ե Աննա Ուխտունեն, — հուզվելով, խոսեց կինը: — Յե՛ն աշխարհում յերկար եմ ապրել և յերբեք դեռ չեմ տեսել այդպիսի բարի զինվորականներ, ինչպես այսօր: Յե՛ն միշտ խոսափել եմ հրացանավոր մարդուց, իսկ յեթե պատահաբար նրա աչքին ընկել եմ, ապա սպառնալիքներից և կոպտություններից բացի յես նրանից վոչինչ չեմ տեսել: Իսկ հիմա յես յեկել եմ չնորհակալություն հայտնելու Կարմիր Բանակին՝ նրա լավ մարդկանց համար: Հենց նոր միայն անտառում հանդիպեցի մի կարմիրբանակայինի, և նա ինձ ձեռք չտվեց, նույնիսկ ոգնեց:

— Տեսնո՞ւմ եք, մայրիկ, — ընդհատեց նրան հրամանատարը, — մեզ մոտ բոլորն ել այդպիսի մարդիկ են: Դեռևս Լենինն ե տեսել, վոր ժողովուրդը չափաք ե վախենա հրացանավոր մարդուց, յեթե նա հազած ե կարմիրբանակային համազգեստ: Դուք Լսե՞լ եք Լենինի մասին:

Աննան աչքերը ցած դցեց և, շունչ քաշելով, շնջաց:

— Այո, լսել եմ, լալն եր Լենինը: Նա ազատություն տվեց խեղճ Ֆինլանդիային: Միայն թե մեզ մոտ ըստ Լենինի չեղավ:

— Վոչինչ, մայրիկ, — շանգստացրեց նրան հրամանատարը: — Հիմա ըստ Լենինի կլինի: Դուք արդեն ունեք ձեր ժողովրդական կառավարությունը և իսկական Դեմոկրատական Հանրապետությունը:

Կինն ազահաբար լսում եր: Նա վստահություն եր զգում գեպի այն բարի մարդիկ, վորոնք նրան շրջապատել էյին<sup>1</sup>:

Ֆինն գեղջիկուհուն շրջապատող մարդիկ սոցիալիզմի բանակի մարտիկներն էյին, բանակ, վոր դաստիարակված ե ինտերնացիոնալիզմի վոգով, բոլոր յերկրների աշխատավորների շահերի միասնության վոգով, ազատագրող բանակի մարտիկները:

Ֆինլանդիայի աշխատավորները հսկայական խանդավառություններն ու դուրսագրվածները, վորոնք վրդովված են Կայանդեր — Նրկկո — Տանների անարգ կառավարության հանցագործ քաղաքականությունը, կույի դուրս յեկան իրենց հայրենիքի բռնակալների և դահիճների դեմ:

Իրենց ազատագրական մեծ միասխայի գիտակցությունը վո-

<sup>1</sup> «Красная Звезда», 11 գեկտեմբերի 1939 թ.:

գեորված, Կարմիր Բանակի մարտիկները Ֆինլանդիայի անտառների և ճահիճների մեջ, դաժան ձմեռվա պայմաններում, հերոսաբար հաղթահարելով անասելի դժվարությունները, ջախջախում են խորամանկ և նենգ թշնամուն, յերկրի յերեսից ջրն՝ ջրում են սպիտակ-գլխադեղինական զարչանքը: Յեւ աշխարհում չկա այն ուժը, վորը խափաներ Կարմիր Բանակի հաղթանակը: Թող մոլեգնեն անգլո-Փրանսական իմպերիալիզմի գիշատիչները՝ սոցիալիստական մեր հայրենիքի ստոր թշնամիները, Ֆիննական ժողովրդի վրեժերի թշնամիները կվռչնչացվեն:

Անգլիական և Փրանսական իմպերիալիստները կատաղի հալածանք հայտարարեցին ԽՍՀՄ-ի և Կարմիր Բանակի դեմ: Ոգտագործելով սուսան ու զրպարտությունը, նրանք ջանում են ընդարձակել ԽՍՀՄ-ի դեմ ուղղված պայքարի հյուսիսային պլանցարմը:

Բայց պատերազմի պրոլոկատորները վո՛չ ստոր սուտը, վո՛չ նողկալի գրպարտությունն ու արտասովոր ճիչն ու վռոնոցը չեն կարող մոլորություն մեջ գցել կապիտալիստական յերկրների աշխատավորներին: Ամբողջ աշխարհի ժողովուրդները հուսով և անրով իրենց հայացքը հառում են սոցիալիզմի յերկրի հզոր բանակին, վորովհետև նրանք գիտեն, վոր Կարմիր Բանակն ամբողջ աշխարհի աշխատավորների շահերի պաշտպանն է հանդիսանում: Կարմիր Բանակի հաղթանակները, ԽՍՀՄ-ի հաղթանակները համաշխարհային պրոլետարիատի հաղթանակներն են: Դրանք արագացնում են ամբողջ աշխարհի աշխատավորների ազատագրումը կապիտալիզմի լծից և արագացնում են կոմունիզմի հաղթանակն ամբողջ աշխարհում:

Կապիտալիստական յերկրների աշխատավորների մեջ ամէլի ու ամէլի յե աճում դժգոհությունը պատերազմի իմպերիալիստական հրճիղների քաղաքականությունից: Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում ամէլի ու ամէլի հաճախ են բռնկվում գործադուլներ, բողոքներ պատերազմի և սպիտակֆիննական ռազմամոլներին ոգնելու դեմ: Ամբողջ աշխարհի բանվորները հալանություն են տալիս Կարմիր Բանակի արդարացի, ազատագրական պայքարին Ֆինլանդիայում և պատրաստ են մշտապես ոգնություն գալու իրենց սոցիալիստական հայրենիքին:

«Չենց վոր,—ասում եր Լենինը,—միջազգային բուրժուազիան ձեռք է բարձրացնում մեր վրա, նրա ձեռքը բռնում են նրա սեփական բանվորները»:

Մեր ժողովուրդը մորիլիզացիոն պատրաստություն մի՛ճակի մեջ է դնել: Թշնամիները մեզ հանկարծակի չեն բերի:

«... Կարմիր Բանակը և Ռազմա-Մովային Նավատորմը հպարտ են այն գիտակցությամբ, վոր Խորհրդային Միության գիւնված ուժերի հետ մեկտեղ մեր ամբողջ հիանալի ժողովուրդն ու կառավարությունը, Լենինի—Ստալինի կուսակցությունը և մեր իմաստուն առաջնորդ Ստալինը միշտ և անդադար, հանգիստ և ուժգին աշխատում են, վորպեսզի ամեն մի վայրկյան լինեն մարտական լիակատար պատրաստության մեջ: Խորհրդային Միությունը չեն կարող հանկարծակի բերել միջազգային իրադարձությունները, վորքան ել դրանք անակնկալ ու անեղ լինեն: Իսկ այն պարոնները, վորոնց մթաղնված բանականությունը նրանց խանգարում է Խորհրդային Միությունը տեսնել այնպես, ինչպիսին նա կա իրականում, միշտ կստանան առարկայական դասեր այնքան ժամանակ, մինչև հատկանան, վոր խորհուրդների մեծ ժողովուրդն ունի և միշտ կունենա իր մեծ ու թշնամու դեմ մղվող պայքարում սարսափելի գիւնված ուժը, վորը կխորտակի ամեն ժամանակ ու բոլորին, ով վոր համարձակվի ձեռք բարձրացնել հաղթական Խորհրդային Միության սրբազան իրավունքների, հողի ու սրտովի վրա»<sup>1</sup>:

ԽՍՀՄ-ում կատարվում է ամենալիթխարի ստեղծագործական աշխատանք: Խորհուրդների Յերկրի ժողովուրդները պատմության մեջ չունեցված ենտուղիազմով կատարում են ստալի-նյան յերրորդ հնգամյակի պլանը: Խորհրդային Միության աշխատավորները լի յեն հանգստությամբ և վստահությամբ իրենց ուժի ու հզորության նկատմամբ: Նրանց համար սարսափելի չեն արտաքին թշնամիների և վոչ մի դավերը: Նրանք գիտեն, վոր իրենց խաղաղ աշխատանքը պահպանում և անխորտակելի Կարմիր Բանակը:

Խորհրդային ժողովուրդը Կարմիր Բանակի անուպառ ու-յերվն է: «Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է»,—ասպես է ասված Ստալինյան Սահմանադրության մեջ: Յեւ խորհրդային քաղաքացիները տիրապետում են ռազմական գիտելիքներին: Խորհրդային միլիտանավոր կրակոս հայրենասերներ միացած են ժողովրդական հզոր կազմակերպության՝ Պաշտպանության մեջ: Պաշտպանության մեջ անդամներն ամեն ու ուսումնասիրում են ռազմա-

<sup>1</sup> Վորոշիլով, Ընդհանուր գիւնություն պատրաստության սրենքի նախադի մասին, էջ 31—32, Պետքաղհրատ, 1939 թ.:

կան գործը, յուրացնում են ժամանակակից մարտական տեխնիկան: Պաշտ-ավիաբեմի բազմաթիվ դպրոցները, անբուսականները և հրաձիգ ջոկատները, զենացրորդները, նոնականները, հեծելավորները, հրետավորները խմբակները, հակառակորդները և հակաբեմական պաշտպանությունը ջոկատները պատրաստում են սոցիալիստական հայրենիքի կայուն, հմուտ, խիզախ և գիտակից պաշտպաններ:

ԽՍՀՄ-ի աշխատավորները լավ են հիշում ստալինյան ցուցումը մորիկդացիոն պատրաստականություն մատնել: Ընկեր Ստալինը ընկ. Իվանովին ուղղած նամակի մեջ գրում էր.

«Պետք է ամեն կերպ ուժեղացնել և ամրապնդել մեր Կարմիր Բանակը, Կարմիր Նավատորմը, Կարմիր ավիացիան, Պաշտ-ավիաբեմը: Պետք է մեր ամբողջ ժողովուրդը պահել մորիկդացիոն պատրաստականություն վիճակում՝ ուսումնական հարձակման վտանգի դեմ-հանդիման, վորպեսզի վոչ մի «պատահականություն» և մեր արտաքին թշնամիներին վոչ մի ֆոկուս չկարողանան մեզ հանկարծակիի բերել...»:

Կատարելով սուսնորդի ցուցումը, մենք պետք է ուժեղացնենք մասսայական պաշտպանական աշխատանքը գործարաններում, կոլտնտեսություններում, հիմնարկություններում: Պետք է հասնել այն բանին, վոր Պաշտ-ավիաբեմի կազմակերպությունները մեր յերկրի նոր տասնյակ-միլիոնավոր աշխատավորները ընդգրկեն: Անհրաժեշտ է Պաշտ-ավիաբեմի ամեն մի անդամի բացատրել այն գործի կարևորությունն ու այժմեականությունը, վորով գրազվում է Պաշտ-ավիաբեմը:

Խորհրդային ժողովուրդը և նրա Կարմիր Բանակն աչալորջ կերպով պահպանում են սոցիալիզմի մեծ նվաճումները, իրենց սրբազան հայրենիքը և դրանց վրա հարձակվել թույլ չեն տա վոչ վոքի և վոչ մի ժամանակ:

Մեր բազմամիլիոն ժողովուրդին մեծ պատիվ է վիճակվել՝ մարդկության պատմության մեջ առաջին անգամ կառուցել նոր աշխարհ, վորտեղ այլևս չկան շահագործողներ և ճնշողներ, վորտեղ վոչնչացված է մարդու միջոցով մարդու շահագործումը, —սոցիալիզմի աշխարհ: Բայց մենք դեռևս սոցիալիզմի միակ յերկիրն ենք, վորն ապրում է կապիտալիստական շրջապատման մեջ: Ահա թե ինչու Խորհրդային պետության գլխավոր ուժերը՝ մեր քաջարի Կարմիր Բանակը և Ռազմա-Մովային Նավատորմը յեղել են, և՛ և կրկին կուսակցության, Խորհրդային իշխանության և ամբողջ ժողովուրդի հատուկ հոգացողության առարկան:

Դիմավորելով Կարմիր Բանակի 22-րդ տարեդարձը, ամեն մի աշխատավորի պարտականությունն է, սրբազան պարտականությունն է աշխատել այնպես, վոր և՛ ավելի անմատչելի դառնա ԽՍՀՄ-ը —սոցիալիզմի ամբողջը, և՛ ավելի հզոր ու անպարտելի դառնա մեր Կարմիր Բանակը:

Կարմիր Բանակի փառապանծ տարեդարձի ուր իրոր աշխատավորների հայացքները վերստին կուզվեն դեպի մեծ Խորհրդային Միությունը, դեպի Լենինի —Ստալինի կուսակցությունը, դեպի նա, ով ամեն տարի անչեղորեն մեզ տանում է դեպի նորանոր հաղթանակներ:

«Մեզ ղեկավարում, մեզ դեպի նորանոր հաղթանակներ է տանում Սոցիալիստական Հեղափոխության առաջին մարշալը, և՛ քաղաքացիական պատերազմի, և՛ սոցիալիստական շինարարություն, և՛ մեր կուսակցության, մեծ Լենինի ժառանգության ամրապնդման ֆրոնտներում ձեռք բերված հաղթանակների մեծ մարշալը, —ամբողջ մարդկության կոմունիստական շարժման մարշալը —մեր մեծ Ստալինը! Նրա՛ն, Կոմունիզմի այդ իսկական Մարշալին —Ստալինին, նրա՛ն, մեծագույն մարդկանցից մեծագույն մարդուն —Լենինի հաջորդին, նրա՛ն, վորը ուր-ավուր մեզ բոլորիս ցույց է տալիս լույսիկյան աշխատանքի լավագույն որինակներ, նրա՛ն, Ստալինին, վորը, ինչպես ուրիշ վոչ վոք, գիտե, թե ի՛նչ պետք է անել այսօր, վորպեսզի հաղթենք և՛ վաղը և՛ ընդմիշտ, —մեր պրոլետարական ուսան!»<sup>1</sup>:

<sup>1</sup> Ворошилов, За мощное стахановское движение в стране и Красной Армии, 49 21—22, 1935 թ.:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                  |    |
|----------------------------------------------------------------------------------|----|
| Կարմիր Բանակը ժողովրդի զավակն է . . . . .                                        | 3  |
| Լենինը և Ստալինը Կարմիր Բանակի կազմակերպիչներն ու առաջնորդ-<br>ներն են . . . . . | 9  |
| Հզոր յերկիրն ունի հզոր բանակ . . . . .                                           | 21 |
| Կարմիր Բանակը ժողովրդական հերոսների բանակ է . . . . .                            | 27 |
| Մշտական լինել մորթիկացիին պատրաստակամությամբ վիճակում . . . . .                  | 39 |

Քարզմ. Ռ. Փորտուգյան

Համեմատությունը և ստիկատական աշխատանքը

Կատարել է Հ. Տ.-Հովհաննիսյանը

Խմբագիր Ա. Հակոբյան

Տեխնիկական խմբագիր Ա. Խաչատրյանը

Մրբագրիչ Ա. Մանուկյան

Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արուստ

Գլավլիտի լիազոր, Վ. 1174 հրտա. № 818, պատվեր № 135, տիրաժ 3000

Հանձնվել է արտադրության 8 IV 1940 թ.

Ստորագրվել է տպագրելու 22/V 1940 թ.

Դիմել 60 Կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,  
Յերեան, Ալլահվերդյան № 65

<< Ազգային գրադարան



NL0215610

40.536

ԳԻՆԸ 60 Կ.

И. ВОСТРЫШЕВ  
ГЕРОИЧЕСКАЯ АРМИЯ  
СОВЕТСКОГО НАРОДА

Государственное издательство политической литературы  
Ереван ● 1949